

ՍՅՈՒՆԻԱՍ ԵՐԿԻՐ

Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
31 ՄԱՅԻՍԻ 2012թ.

№ 14 (255)

www.syuniacyerkir.am

...Անձայր է գիշերը,
անհայտ է ուղին:
ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՏ

ԼԻՆԵՆՈՒ ԲԱՆԱԶԵՎԸ



ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ Զինվորական կոմիսարը

Սկսվել է ՀՀ զինված ուժերի գարնանային թարմացման գործընթացը: Մեկուկես ամիս շարունակ զինվորացու փոխարինելու իրենցից երկու փարով ավագներին: Գարնանային զորակոչի եւ խնդրո առարկային առնչվող այլ հարցերի շուրջ է մեր զրույցը Սիսիանի զինկոմ, Արցախյան ազատամարտի վեպերան, փոխգնդապետ Մինաս Մկրտչյանի հետ:

— Պարոն փոխգնդապետ, ազգային բանակի կայացման կարեւոր նախադրյալներից է զորակոչի հաջող անցկացումը, քանզի չի կարող լինել բանակ առանց զինվորի: Եկեք մեր զրույցը սկսենք նրանից, թե ինչպես է մեկնարկել գարնանային զորակոչը:

— Նախ, տեղեկացնենք, որ զորակոչի՝ 2011թ. արդյունքներով 3-րդ կարգի զինկոմիսարիատների մեջ արժանացել ենք հաղթողի կոչման եւ ստացել փոխանցիկ դրոշ: Պարզեւն առավել քան պարտավորեցնող է, եւ ձգտելու ենք ապացուցել, որ պատահականորեն չի հանձնվել մեզ: Հանրապետությունում գարնանային զորակոչի մեկնարկի օր է հայտարարված մայիսի 22-ը (հարցազրույցը կայացել է մայիսի 18-ին, խմբ.): Զինակոչիկները բուժզննման գործընթաց են անցել, ոմանք գործուղվել են մայրաքաղաք՝ վերջնական ախտորոշումը հաստատելու համար: Մարդկային ռեսուրսի առումով խնդիրներ չունենք, զորակոչի վերաբերյալ հասկանալի պատճառով թվական տվյալներ չեն հրապարակի:

— Զորակոչն ըստ էության արտացոլում է երիտասարդության առողջական վիճակի պատկերը, որ վերջին տարիներից բնավ էլ միտքարական չէ, եթե չասենք՝ լրջորեն անհանգստացնող է:

— Եթե այսօր գոհունակությամբ ատում ենք, որ մեր պատանիներն այլեւս չեն խուսափում զինվորական ծառայությունից, ապա նույնը չի կարելի ասել զինծառայությանը նրանց պատրաստվածության մասին: Այսօրվա զինակոչիկների մեծ մասը ֆիզիկական թերզարգացում ունի: Պատճառն այն է, որ 15-18 տարեկաններին տանը, դպրոցում, ուսումնական հաստատություններում չեն ստիպում զբաղվել ֆիզիկական աշխատանքով, որ նրանց մկանային եւ ոսկրային համակարգերը համամասնորեն զարգանան: Ինչպես ցույց են տալիս բուժզննումները, վերջին տարիներից ավելացել են որոշակի խումբ հիվանդություններ, դրանցից կառանձնացնեն սրտային հիվանդությունները, կրծքավանդակի, ողնաշարի ռեֆորմացիաները, ոմանք տեսողական խնդիրներ ունեն: Նաեւ ասենք, որ այս անգամ զորակոչվում են 1992-94թթ. ծնվածները, տարակույս չի կարող լինել, որ մութ ու ցուրտ տարիները բացասաբար են անդրադարձել նրանց լույս աշխարհ գալուն: Ըստ իս՝ 1995-96թթ. ծնվածներն առողջական այդքան ընդգծված խնդիրներ չեն ունենա: Այժմ կան թերզարգացած զինակոչիկներ, ովքեր, անշուշտ, մանրակրկիտ հետազոտվելու են: Նրանք, ովքեր առողջական լուրջ խնդիրներ կունենան, չեն զորակոչվի, այլ վեց ամսով, մեկ, երեք տարով տարկետում է տրվելու, մինչեւ վերականգնեն առողջությունը եւ նոր միայն զորակոչվեն:

— Բայց որքանով տեղյակ ենք, Շարունակությունը՝ էջ 5

Վերադարձ

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

Մայիսի 28-ին Սիսիանում (հարյուրավոր մարդկանց, հոգեւոր, աշխարհիկ, զինվորական իշխանությունների ներկայացուցիչների մասնակցությամբ եւ քաղաքապետարանի նախաձեռնությամբ) բացվեց Արցախյան գոյամարտի քաջ վաշտապետ Վուրգ Ոսկանյանի հուշարձանը: 2, 16

ՀՀԿ-ն ստանձնում է հիմնական պատասխանատվությունը

ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ

Մայիսի 24-ին ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը հանդես եկավ հայտարարությամբ եւ նշեց, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը նպատակահարմար չի գտնում մասնակցել կոալիցիոն կառավարության ձեւավորմանը:

Նույն օրը հայտարարությամբ հանդես է եկել ՀՀԿ գործադիր մարմինը: Հայտարարության մեջ նշված է. «Նույն թվականի մայիսի 6-ին տեղի ունեցած համապետական ընտրությունների արդյունքում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, ստանալով հասարակության ճնշող մեծամասնության թվեւ, ընդլայնեց իր դերակատարությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Այն մեզ հնարավորություն է տալիս, կենսագործելով ՀՀԿ ծրագրային դրույթները, ապահովել Հայաստանի կայուն եւ շարունակական զարգացումը՝ դառնալով հասարակության սպասելիքների ու ակնկալվող փոփոխությունների հիմնական երաշխավորը:

Մենք շնորհակալ ենք մեր ժողովրդին եւ քաղաքական ուժերին այն բանի համար, որ բոլորիս մասնակցությամբ հաջողվեց լավ ընտրու-

թյուններ անցկացնել մեր երկրում: Մենք շնորհակալ ենք մեր կուսակցությանը տրված զնահատակամի եւ նորից վստահելու համար:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ավարտում է քաղաքական խորհրդակցությունների շարքը՝ խորհրդարանական ընտրություններից հետո մեր երկրում ձեւավորված դրական միջավայրն ամրապնդելու եւ զարգացմանը միտված համագործակցային մթնոլորտ ապահովելու ուղղությամբ:

Մայիսի 31-ին Ազգային ժողովի 5-րդ գումարման առաջին նիստին ընդառաջ՝

ՀՀԿ-ն հայտարարում է.
1. Ստանձնելով ԱԺ-ում քաղաքական մեծամասնությանը ՀՀ սահմանադրությամբ վերապահված պատասխանատվությունների ողջ ծավալը՝ մենք, ինչպես եւ նախկինում, հանդես ենք գալիս որպես հանրային համերաշխության եւ բազմակողմանի համագործակցության համոզված կողմնակից:

2. Այդ համատեքստում, մենք պատրաստակամ ենք քննարկել ԱԺ-ում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի ցանկացած ողջամիտ առաջարկ՝ ի նպաստ մեր պետության զարգացման եւ յուրաքանչյուրի համար ավելի լավ Հա-



յաստան կառուցելուն:
3. Որպես պատասխանատու քաղաքական ուժ, մեր ավելի քան 20-ամյա գործունեությունը ծառայեցրել ենք անկախ պետականության կայացմանն ու ամրապնդմանը, արել ենք հնարավոր մեր երկրի ու ժողովրդի առջեւ ծառայած խնդիրների լուծման համար: ՀՀԿ-ն այսուհետ եւս, ստանձնելով հիմնական պատասխանատվություն, հաստատական է իր ծրագրերն իրականացնելու գործում:

Հ.Գ. Ս.Ք. մայիսի 30-ին ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի կողմից ստորագրվել է քաղաքական կոալիցիայի համաձայնագիր: Կոալիցիան առաջիկա նախագահական ընտրություններում, ի դեմս Սերժ Սարգսյանի, հանդես է գալու միասնական թեկնածուով:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Սիսիանում բացվեց Վուրգ Ոսկանյանի հուշարձանը



Վերադարձ

ԼԻՆԵՆՈՒ ԲԱՆԱԶԵՎԸ

Սկիզբը՝ էջ 1

Արցախյան գոյամարտում զոհված 113 սիսիանցիներից մեկն է Վուրգ Ոսկանյանը՝ թշնամու զնդակից 1993թ. մարտի 31-ին Լաչինի շրջանի Վակունիս գյուղի մոտ նահատակված: Նրա վերահառնումը (1-ին էջի լուսանկարում) այդպես է պատկերել քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը: Երախտապարտ սիսիանցիների երկամյա ջանքով արարված քարե այդ սկզբուն, կարծեք, մեր վերջին ազատամարտի բոլոր նահատակների հավաքական կերպարն է մեկտեղված: Կարծեք բոլոր նահատակները՝ Վուրգի տեսքով, պարտադրում են մեզ տեր կանգնել իրենց այրյամբ կռած հաղթանակին ու փորձությունների մեջ հայտնված մեր անկախ պետականությանը: Եվ մեկ անգամ նրանք հորդորում են՝ ոչ ոք իրավունք չունի շահարկել Արցախյան գոյամարտին իր մասնակցությունը, քանի որ դա Հայրենական պատերազմ էր, ժողովրդական պատերազմ, ոչ ոք իրավունք չունի շահարկել զոհված ազատամարտիկների անեղծ եւ սրբատուրբ անունները, ոչ ոք իրավունք չունի խտրություն դնել մեռյալների միջեւ, ողջ մնացած ազատամարտիկների միջեւ, ոչ ոք իրավունք չունի Արցախյան հերոսամարտի պատմությունը իր քիմքին հաճո շարադրել, իր մասնակցությամբ տեղի ունեցած ամենաչնչին մարտական գործողությունը դյուցազնամարտ հռչակել՝ սեփական իշխանական դիրքն օգտագործելով, քանզի այն, միեւնոյն է, վերանայվելու է երբեք, եւ ճշմարտությունն է հաղթելու ի վերջո: Բարձրալի հետ զրույցի բռնված պղծակոփ Վուրգը բոլոր նահատակ զինվորների անունից, իբրեւ քարե կանոն, հիշեցնում է վերստին՝ Արցախյան գոյամարտում կռվելն ավելի հերոսականություն էր պահանջում, քան խաղաղ պայմաններում նոր Հայաստանի, անկախ Հայաստանի, քաղաքացիական ու իրավական Հայաստանի կառուցմանը մասնակցելը: Միայն այդպիսի գիտակցությամբ ու գործելակերպով կարող է Արցախյան կռիվը մեր վերջին հերոսամարտը չլինել, միայն այդպես կարող ենք մեր լինելիության ճանապարհին հաղթական նոր հերոսամարտերի ակնկալիք ունենալ...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Նա վերադարձել է ոգեղեն դարձած

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ելույթը



Սիրելի՛ հայրենակիցներ: Մեծարգո՛ հյուրեր: Միա էլ իրականություն է դարձել տարիների մեր բաղձանքը. Վուրգ Ոսկանյանը՝ քարեղեն տեսքով, վերադարձել է իր բնօրրան Սիսիան և հավերժորեն ու վեհաշուք կերպով կանգնել մեր շարքի առջեւում, ինչպես էլ կար 1988-ին՝ հայոց ազգային զարթոնքի օրերին, եւ հետո, երբ կարիք եղավ պաշտպանելու հող հայրենին ու հայ մարդու արժանապատվությունը, երբ ազգովի վճռեցինք վերականգնել դարերով կորսված մեր պետականությունը: Ես շնորհավորում եմ բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ՝ նշանակալից այս իրադարձության կապակցությամբ, եւ հայ մարդու ու հայ զինվորի իմ ուրախությունը հայտնում, որ Արցախյան հերոսամարտի բոլոր նահատակներին՝ անուն առ անուն

եւ աստիճանաբար, ոգեկոչում ենք, վերադարձնում ու կանգնեցնում հավերժի պատվանդանին: Ես շնորհակալություն եմ հայտնում երախտապարտ սիսիանցիներին եւ հատկապես բոլոր այն մարդկանց ու կազմակերպություններին, որոնք տեր կանգնեցին սյունեցիների ու Արցախյան ազատամարտի մասնակիցների անկեղծ ցանկությանը եւ իրենց ջանքով իրականացրին Վուրգի հիշատակի հավերժացումը: Եվ մեկ անգամ իմ հիացմունքն ու գոհունակությունն եմ փոխանցում Սյունյաց աշխարհի արժանավոր զավակ Գետիկ Բաղդասարյանին, ով կարողացավ ճարտարապետական ու քանդակագործական անկրկնելի լուծումներով, յուրահատուկ ոճով ու բարձր ճաշակով, խորհմաստությամբ ու գեղարվեստականությամբ ապահովել Վուրգի վերահառնումը: Քարե այս խոյանքում՝ Վուրգ Ոսկանյանի տեսքով, խտացված, հավաքված, արտացոլված են, կարծեք, մեր վերջին գոյամարտի բոլոր հերոսները, ինչը կթողի բացարձակ եւ անվիճելի արժանիքներից է: Պա-

տահական չէ, որ հուշարձանին հաղորդվելով՝ մարդ ակամա հիշում է Արցախյան պատերազմում մարտիրոսված մեր յուրաքանչյուր ընկերոջ: Հարգանք Վուրգ Ոսկանյանի մաքրամաքուր անվանը, որ դարձել է ոգեղեն ման առաջառ աղբյուր ողջերիս համար: Խոնարհում այն ազատամարտիկների հիշատակի առջեւ, որոնց կյանքի գնով ապահովվեց մեր հաղթանակը եւ հայոց հնամենի Արցախի ազատությունը: Անվիճելի է, որ Վուրգ Ոսկանյանը վերադարձել է ոչ թե սոսկ հուշարձանի եւ հուշի տեսքով, այլ՝ ոգեղեն դարձած: Իսկ այս հուշարձանի խորհուրդը... Եթե խաչելություն է, ապա չարչարանք է հանուն ազատ եւ հզոր Հայաստանի: Եթե զրույց է Բարձրալի հետ, ապա նորից ազատ ու հզոր Հայաստանի մասին է: Այնպես որ՝ Վուրգ Ոսկանյանի եւ ազատամարտի բոլոր նահատակների մեն-միակ պատգամը բանաձեւված է եւ մեկնված է այսօրվա ու զալիքի բոլոր սերունդներին. արժանապատիվ տերը լինեք հայոց պետությանը:

Ուրեմնե՛ փառք Հայաստանի Հանրապետությանը: Հարգանք եւ պատիվ Սիսիանին, որ իր հերոս զավակներին հիշել, ոգեկոչել եւ ապրեցնել գիտի, որ իր նահատակ զավակների հիշատակով ու պատգամով ապրել ու արարել գիտի: Ճակատագրի կամոք Վուրգ Ոսկանյանի հուշարձանի բացման օրը, որ նրա ծննդյան օրն է, համընկել է մեր ժողովրդի ամենամիլիարդական տոներից մեկի՝ Հանրապետության տոնի հետ: 94 տարի առաջ՝ այս օրը, վեցդարյա ընդմիջումից եւ Սարդարապատի, Ջանգեղուրի, Բաշ Ապարանի ու Ղարաբաղի իսրայիլի հերոսամարտերից հետո, վերականգնվեց հայոց անկախ պետականությունը: Ընդունեք շնորհավորանքս ու բարեմաղթանքս Հանրապետության օրվա առթիվ: Թող հավերժ լինի հայոց պետականության երթը: Թող մեզանից յուրաքանչյուրն արժանապատիվ մասնակիցը լինի այդ երթի:

Թանգարանում մարդաշատ էր

Թանգարանների միջազգային օրվա առթիվ մի քանի տարի է, ինչ մեզանում կազմակերպվում է «Թանգարանային գիշեր» միջոցառումների շարքը: Այս անգամ այն անկացվեց «Գիրք փոփոխվող աշխարհում» խորագրի ներքո՝ մայիսի 19-ին:



19.05.2012թ. «Թանգարանային գիշեր» միջոցառման ժամանակ:

Կապանի երկրագիտական թանգարանում մինչ «Թանգարանային գիշերվա» առթիվ ներկայացված ցուցադրանքին ծանոթանալը՝ օրվա խորհրդին պատշաճոր խոսք ասացին թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը, Գրիգոր Գեւորյանը, Քաջարանի N1 հիմնական դպրոցի տնօրեն Լեւոն Մարգարյանը, Սյունիքի մարզպետարանի մշակույթի բաժնի պետ Սարգիս Ղազարյանը, Ռոբերտ Էջանյանին: Մասնավորապես, մասնավոր անձանց հավաքածուներից թանգարանի ֆոնդը հարստացնելու կոչ-խնդրանք հնչեց:



17.04.2012թ. Թանգարան էր այցելել ԶԳՆ Խախատակ Սերժ Սարգսյանը:

Ցուցադրանքներից մեկը նվիրված էր Յայ գրատարության 500-ամյա հոբելյանին: Մասնավորապես ներկայացվել էին «Յայկայան բառարանը»՝ Վենետիկում լույս տեսած, 1847թ., հին հրատարակության Աստվածաշունչ, այլ հնատիպ գրքեր, պարբերական մամուլի մուշկներ: «Յին ու Նոր Կապան» խորագիրն էր կրում լուսանկարների ցուցադրությունը (հեղինակ է կազմակերպիչ, թանգարանի ֆոնդապահ՝ Արմինե Գևորյանին), գուգահեռ ներկայացված էին Կապանի տարբերության հիշարժան իրադարձությունները՝ «Ձանգեզուր» զնացքի մուտքը Կապան, հորհրդային Միության հերոս Գուհարյան Ավետիսյանի հուշարձանի բացումը, Սմբատ Մելիք-Ստեփանյանին նվիրված գիտաժողովը Կապանում և այլն: «Թանգարանային գիշերվա» նախապատրաստման շրջանում՝ թարմացվել էր «Յիշողություն» խորագիրը կրող ցուցադրությունը:

Սույն առթիվ միջոցառմանը մասնակցեց Կապան քաղաքի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանը՝ ուշագրավ ցուցադրությամբ, որտեղ ներկայացված էին կապանի ստեղծագործող կանանց գեղանկարչական աշխատանքներ և կրթամասերի արվեստի տարբեր տեսակների մուշկներ: Երեկոյի ընթացքում այցելուների առջև դասական երաժշտությամբ հանդես եկան Կապանի N2 երաժշտական դպրոցի սաները: Միջոցառման մասնակիցներին ողջույնի խոսք հղեց Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը:

Մայիսի 19-ին մարզկենտրոնի արվեստասերները ծանոթացան գեղագիտական դաստիարակության կենտրոնի Կապանի ժամանակակից արվեստի թանգարանի ցուցանմուշներին:

Յերթը հասավ Մազրայի ոսկու հանքավայրին

ԷՎՈԼՈՒՐ

Յայաստանի հաշվեկշռում գտնվող 14 ոսկու հանքավայրից ես մեկը պատրաստվում են բաց եղանակով շահագործել: Դա Սյունիքի Շավ հանայնի հարևանությամբ գտնվող Բարձրադիրի (Մազրայի) ոսկու հանքավայրն է: Մայիսի 29-ին գյուղում տեղի ունեցան հասարակական լսումներ, որը կազմակերպել է «Օփուլենո Թրեյդինգ Սոլյուշնս» ՍՊԸ-ն գյուղապետարանի հետ համատեղ: Յանքավայրն անմիջականորեն հարակից է Շիկահողի արգելից, որի կողքին գտնվում է Շավ գյուղը: Միայն այդ հանգամանքը պետք է հիմք ծառայեր, որպեսզի Բնապահպանության նախարարությունը, որը հաստատվել էր պահպանվող տարածքների ուժեղացման համար միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների կողմից աջակցություն է ստանում, թույլ չտար նախագիծը դիտարկել: Դա լիովին կհամապատասխաներ Բնապահպանության նախարարության գործառնություններին և «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքին: Այնուամենայնիվ, նախագիծն ընդգրկված է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի մեջ և ներկայացված է հանրային քննարկման: Սյունիքից մեր

աղբյուրները հայտնում են, որ Շավ գյուղի բնակիչները աջակցում են նախագիծին: Գյուղն աղքատ է և հետաքրքրված է աշխատատեղերով, որոնք առաջարկում է նրանց ընկերությունը: Դեռ այլընտրանք նրանց չեն առաջարկում:

Յասարակական լսումների առնչությամբ «Թռչկան» քաղաքացիական նախաձեռնությունը և Թեղուտի պաշտպանության խումբը տարածել են հարողագրություն, որում ասված է. «Սյունիքի մարզի Շավ գյուղում Բարձրադիրի (Մազրայի) ոսկու հանքի վերաբերյալ ս.թ. մայիսի 29-ին կազմակերպված հանրային լսումների մասին տեղեկացանք լրատվամիջոցներից և ՀՀ բնապահպանության նախարարության ինտերնետային կայքից: Սակայն ցավում ենք, որ հանքարդյունաբերական նման ծրագրերի հապճեպ կազմումը, հանրային լսումների ոչ պատշաճ ու ֆիկտիվ կազմակերպումը և Յայաստանի ընդերքի, բնության, ինչպես նաև բնակչության առողջության վրա անդառնալի բացասական հետեւանքներ ունեցող ոլորտն առաջ մղելու քաղաքականությունն ակտիվորեն շարունակվում է՝ առանց գիտակցելու դրա կործանարար հետեւանքները: Ցավում ենք նաև, որ տնտեսության այլընտրանքային զարգացման ուղ-

ղությունները չեն դառնում պետական քաղաքականության մաս, և հանրությանը պարտադրվում են ոչ կայուն, հեռահար հաշվարկներ չունեցող, ներկա և ապագա սերունդների կենսական միջավայրը ապականող, ինչպես նաև նրանց առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը հաշվի չառնող տնտեսական ծրագրեր:

Յայաստանի ամենախոցելի, և ազգային ու համաշխարհային նշանակության եկոհանակարզ ունեցող տարածաշրջանում, բաց հանք շահագործելու այս մտադրությունն ուղղակի զարմանք է առաջացնում: Յույս ունենք, որ տարածաշրջանի բնակչությունը կկարողանա դրսևորել ճիշտ դիրքորոշում և կընտրի զարգացման կայուն ուղի, որի լավագույն հնարավորությունն այսօր այն ունի: Ցանկանում ենք հիշեցնել, որ ՀՀ կառավարության խնդրանքով և անմիջական մասնակցությամբ հաստատվել է «Յարավային Հայաստանում կենսոլորտային տարածքի ստեղծում» խնդր դրամաշնորհային ծրագիրը՝ Գերմանական զարգացման բանկի 8,25 մլն եվրո արժողությամբ ներդրումով (ՀՀ բնապահպանության նախարարի 2012թ. հունվարի 30-ի առույթ): Այս ծրագրի իրականացմամբ տարածաշրջանի 12՝ այդ թվում Շավ

Մեղրեցիները՝ ուրանի ու առողջապահական խնդիրների մասին

ԶՐՈՒՅՑ ԷՎՈԼՈՒՐ ԻՏԵ

Անուշ Մարտիրոսյան

– Շատ են անհանգստացած, որովհետև Մեղրիում հիվանդությունները շատացել են: Երեկ 100-ից 70-ը հիվանդ կլինեն, եթե ոչ ավելին: Ում խոսեցնում ես, ճնշման պրոբլեմներ ունի, սրտի պրոբլեմներ ունի: Բացի դրանից, բնությունն է փչանում: Ափսոս են շատ, ծառերը չորանում են: Նման բան պատմության մեջ չի եղել: Առաջ շատ մաքուր էին ջրերը: Մենք մույնիսկ առվի ջրերն էինք խմում: Յիմա մույնիսկ ծորակի ջրերն է վտանգավոր խմելը: Մենք վերագրում ենք դա հանքերի բացմանը, որովհետև այդ հարցը մույնիսկ կոմունիստների ժամանակ 80 թվին էր, ինչ Մոսկվայից հատուկ համեմատողով էր եկել, նայել էին, ասել էին՝ եթե այդ հանքերը հանկարծ շահագործեն, մինչև 30 տարի մարդկությունն էլ է վերանալու, բուսականությունն էլ: Դե ուրանը, պարզ է, մահ է բերում: Բնական բան է: Քիմիական ամենավտանգավոր տարրերից մեկն է: ...Մարալզամի կոչվող գյուղ կա: Այդտեղ բուսականություն էլ չի աճում: Շահագործում են նոր հանք՝ Թեյ-Լիճքավազի հանք է կոչվում, որտեղ շատ ավելի մեծ պաշարներ են հայտնաբերել: Բայց այդ պաշարների տեղը շատ վաղուց է իմացել ժողովուրդը, ղեկավարությունը, բայց ոչ մեկը չի ուզել բացի հանում նրա, որ ժողովուրդը առողջ ապրի: Յիմա մույնիսկ այգիները ջրելուց ենք վախենում: Այդ ոսկու հանքի թափոններն են լցվում, թե ինչ են լվանում, չգիտեն, մեկ էլ տեսնում են՝ գետը մոխրագույն ջուր է բերում: Մեր հարեւանները սածիլները ջրել են այդ ջրով, հաջորդ օրը եկել են, տեսել ամեն ինչ չորացել է: Չկներն են վերանում: Մենք առաջ ձուկ էինք որսում, հիմա գետի մեջ ձուկ էլ չի մնացել: ...Համքը դորձարկելուց հետո ոչ թե մենակ ուրան, ասում են՝ սնդիկ էլ է դուրս գալու այդտեղից:

Ավետա Գրիգորյան

– Մեղրին միշտ եղել է որպես գյուղատնտեսական բնագավառում զարգացող: Գյուղատնտեսությամբ

են մարդիկ իրենց գոյությունը միշտ պահել և լավ օրերին, և վատ օրերին: Յիմա կառավարությունն ուզում է գյուղատնտեսությունը փոխել հանքարդյունաբերության, որի համար օր օրի մի բան ենք լսում: Մեկ այստեղ են հանք բացում, մեկ այստեղ են հանք բացում: Այ օրինակ, ես դեռ չգիտեմ, թե որքան է հավաստի, բայց լսել եմ, որ Տաշտուն գյուղում պետք է բացվի ուրանի հանք, որ սովորական տարիներին դեռ եղել է, բայց փակել են:

Եթե ուրանի հանք բացվի, ես այդտեղից մի փոքր քամի այդ ուրանի փոշին բերի ու Լցմի Մեղրու գետը, որ այդտեղից է հոսում, մեղրեցիների վիճակը, ժողովրդի վիճակն ի՞նչ կլինի, էկոլոգիան ի՞նչ կլինի: Այս բուսականությունը կարճ՝ այդ ջրով: Մարդիկ խմելու ջուրն այդտեղից են վերցնում, ի՞նչ կլինի մարդու վիճակը: 5 տարի անկողնում գամված իմ ամուսնուն ես պահել եմ, կենդանի եմ պահել: Յենք որ մի անգամ տարանք հիվանդանոց, խնդրում էր, աղերսում մի տար: Ինքը գիտեր, որ կենդանի հետ չի գալու: Ում տանում են, հաջորդ օրը դիակ են հետ բերում: Սա հիվանդանոց է: Ոչ բժիշկ կա, ոչ մասնագետներ կան...

Վազգեն Գալստյան

– Այդքան մարդ այդտեղ աշխատում էր (Տաշտունի հանքավայրը նկատի ունենալով), մեկը կենդանի չի ազդում էր դա: Իսկ այն ջուրը, որ գալիս էր, ժողովրդի կեսին տալիս էին, նա այդ սրիկա ջուրն էր: Մարդկանց են ծառերի, բուսականության համար 100 տոկոսացնում վտանգ կա:

Մեղրեցի, ով չցանկացավ ներկայանալ

– Էկոլոգիայի 90%-ը մարդկանց առողջությունն է, իսկ եթե առողջություն չկա, ուրեմն էկոլոգիա էլ չկա: Նախ՝ որակյալ բժիշկների քանակն այստեղ չի ապահովվում: Եկողն էլ արագ գնում է այստեղից: Իսկ հիվանդությունն էլ տարածվում է ինչ-չով՝ ջրով, օդով:

Այստեղի ապրողների մեծ մասը որովայնային ցավեր է ունենում, դա ջրից է գալիս:

<http://www.mnp.am/?p=2006>:
Խնդրանքներ կողմից
Յանքային լսումների և «Սյունյաց երկիր» դիտարկումների մասին թերթի հաջորդ համարում:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ՝ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին ճակատամարտից առաջ

Սիսիանում ուրվագծվում է քաղաքացիների աթոռի համար մրցակցող ուժերի շրջանակը

Առաջիկա սեպտեմբերին Սյունիքի մարզի 94 համայնքում փրկելու կունենան քաղաքացիական ինքնակառավարման մարմինների ընտրությունները...



ԱՐՍԵՆ ԱՎԱԿՅԱՆ



ՏԻՐԳՆ ԳՊՐԱՄԱՆՅԱՆ



ՍՍՍՎԵՆ ԹԱԲԱԿՅԱՆ



ԱՇՈՏ ՄՐՆԱՍՅԱՆ



ԼԱՎՐԵՆ ՍԱՐԳՅԱՆ



ԳԱԳԻԿ ՀՈՎԿԱԿՅԱՆ

Նկատենք, որ շարքային քաղաքացիներին ՏԻՄ ընտրություններն ավելի հոգեհարազատ են, քան Աժ ընտրությունները...

Քաղաքային համայնքների դեկադարների ընտրությունը, այդուհանդերձ, տեղական նշանակության միջոցառում չէ...

Առաջիկա ՏԻՄ ընտրությունները կանցնեն 33 ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով...

Առաջիկա ընտրությունները, ժամանակաշրջանի առումով, առնվազն երկու առանձնահատկություն ունեն։ Նախ՝ ՏԻՄ ընտրությունները տեղի կունենան Աժ մայիսյան ընտրություններից հետո...

2013թ. փետրվարին կայանալիք նախագահական ընտրությանը, իսկ երկու այդ ընտրության փոխկապակցվածությունն ակնհայտ է...

Եվ այս պայմաններում, ահա, մարզի համայնքներում, կարելի է ասել, մեկնարկել է ընտրությունների նախապատրաստությունը...

Այդ գործընթացի կոնկրետ դրսևորումները (ավելի, քան որեւէ այլ համայնքում) տեսանելի են Սիսիան քաղաքում։ Մի քանի հոգի արդեն իսկ վերահաստատել են քաղաքացիների թեկնածու առաջադրվելու մասին իրենց՝ նախկինում հայտնած մտադրությունը։ Որոշ ուժեր էլ հստակեցրել են իրենց անելիքը և չեն խուսափում հայտարարել, որ ամենակարգի մասնակցությունը կունենան Սիսիանի քաղաքացիների ընտրությանը։ Այսօր արդեն կարելի է ասել, որ Սիսիանի քաղաքացիները ընտրվելու համար իրենց թեկնածությունը կառուցողներն գործող քաղաքացիներին և նախկին Սյունիքի տարածաշրջանային մաքսատան պետ Աշոտ Սիմասյանը և, ըստ շրջանառվող խոսակցությունների, Սիսիանի նախկին քաղաքացի (1999-2008թթ.) Լավրենտ Սարգսյանը։

Իրավիճակն օբյեկտիվ գնահատելու և հնարավոր գաղափարները կանխատեսելու համար, ըստ էության, կարելու է պարզել սկզբունքային մեկ հարցի պատասխան՝ Աժ ընտրությունների արդյունքում Սիսիանում արձանագրված ուժերի հարաբերակցությունն արդյո՞ք կպահպանվի քաղաքացիների ընտրության ժամանակ, թե՞ ոչ։ Եթե դրա պատասխանը մի քանի օր առաջ ծածկված էր անորոշության մուժով, ապա այսօր՝ ոչ։ Այն բանից հետո, երբ մայիսի 24-ին ԲՀԿ-ն հայտարարեց ապագա կառավարության մեջ չմտնելու իր որոշման մասին,

կուսակցության ոչ գաղափարական թեւի՝ ԲՀԿ-ի շարքերում մնալով դարձավ թիչ հավանական։ Իսկ թե ԲՀԿ-ի ո՞ր մասն է գաղափարական, կարելի է ենթադրություններ անել առանց դժվարությունների։ Դա նշանակում է, որ Աղասի Հակոբջանյանի ընտրազանգվածը լուրջ փոխակերպման կենթարկվի։ Մյուս կողմից՝ չպետք է մոռանալ, որ Աղասի Հակոբջանյանը 2008-ին Սիսիանի քաղաքացիների ընտրությանը ընտրվել էր Սարգսյանի, Սամվել Թանգյանի և Օեկ-ից քաղաքացիների թեկնածուների հետ մտերմ համատեղ աջակցությամբ։ Այդ ժամանակ հստակ մի խնդիր էր առաջադրվել վերելից՝ քաղաքացիների թեկնածու, ՀՀԿ-ական Տիրգոս Գրիգորյանը չպետք է ընտրվի Սիսիանի քաղաքացիներ։ Քաղաքական ներկայիս իրավիճակում, համոզում Աղասի Հակոբջանյանի վերընտրության, նշված կամ նմանատիպ ուժերի և անհատների դաշնության մասին խոսելն ուղղակի անհեթեթություն է։ Եվ հիմա Աղասի Հակոբջանյանի վերընտրվելու միակ ճանապարհը սեփական ուժերին ապավինելն է, քանի որ քաղաքացիների թեկնածուների աշխատողներն առկա միջոցներ են Աժ վերջին ընտրությունների ժամանակ) աներեր չեն մնա քաղաքացիների հանդեպ ունեցած հավատարմության մեջ (մի քիչ էլ իրավապահ մարմինները կօգնեն, ինչի նշաններն ամիսներ շարունակ ահա երևում են)։

Սյունիքի մարզպետը և ՀՀԿ-ի տեղական կառույցը, բնականաբար, կկամենան իրենց թեկնածուին տեսնել Սիսիանի քաղաքացիության մեջ։ Այլ հարց է, թե ով կլինի այդ թեկնածուն։ Շատերի կարծիքով թեկնածուն կլինի Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը։ Ինքն էլ դրանում համոզված է և քանիցս այդ կապակցությամբ վճռական հայտարարություններ է արել։ Նրա կարծիքով՝ Սիսիանի համար շահեկան է հենց իր ընտրությունը։ «Աղասի

Հակոբջանյանն ուզում է ցմահ մնալ քաղաքացի, Գառնիկ Հովակիմյանի գործերը մայրաքաղաքում երեւի հաջող չեն, ինչից դրոշմ ուզում է Սիսիան վերադառնալ։ Իսկ ես ուզում եմ մնալ իմ քաղաքում...»: Սամվել Թանգյանը բացառում է հավանականությունը, որ մայիսի 6-ին երեւան եկած ուժերի հարաբերակցությունը կպահպանվի քաղաքացիների ընտրության ընթացքում։ Նա բացառում է նաև տարբերակը, որ ՀՀԿ-ն ուրիշ լեզու կառաջադրի քաղաքացիների թեկնածու, առավել ևս՝ Գառնիկ Հովակիմյանին։ Թե ում ՀՀԿ-ն կառաջադրի Սիսիանի քաղաքացիների թեկնածու՝ այդ կուսակցության գործն է և կիմանանք առաջիկայում։ Բայց, անկախ թեկնածուի ով լինելուց, կարելու է լինելու ՀՀԿ-ի մարտավարությունը։ Ինչո՞ւ 2005-ին, 2008-ին պարտվեցին Սիսիանի քաղաքացիների ՀՀԿ-ական թեկնածուները, ինչո՞ւ 2012-ի Աժ ընտրություններում կուսակցությունը պարտվեց Սիսիան քաղաքում։ Կարծում ենք, որ հենց այդ հարցերի պատասխանի հիման վրա ՀՀԿ-ն պետք է սահմանի իր առաջիկա մարտավարությունը։ Այլպես դժվար է ՀՀԿ-ի թեկնածուին երաշխավորված համարել վերահաս պարտությունից։ Ուրեմն և՛ Սամվել Թանգյանը նույնպես պետք է ապավինի սեփական ռեսուրսներին և հետո միայն...

Գառնիկ Հովակիմյան հավակնորդի պարագայում, ճիշտն ասած, մեզ զարմացնում է մեկ-երկու հանգամանք։ Դատեցեք ինքներդ՝ քաղաքացիների հավանական թեկնածուներից ոմանք էլ՝ հակակրանք ունեն միմյանց հանդեպ։ Օրինակ՝ Աղասի Հակոբջանյանը և Սամվել Թանգյանը, կանգնած լինելով իրար դեմ, հիացական կարծիքներ են միաժամանակ արտահայտում միմյանց մասին, որը դրվատելի է։ Բայց բոլոր հավակնորդները, որքան էլ զարմանալի է, բացասական ու մերժողական վերաբերմունք են միասնաբար արտահայտում Գառնիկ Հովակիմյանի հնարավոր առաջադրման կապակցությամբ։ Տպավորություն ունենք, որ Գառնիկ Հովակիմյանն անցանկալի մրցա-

կից է բոլոր մյուս հավակնորդների համար, որ նրանցից յուրաքանչյուրի պատկերացմամբ հենց Գառնիկ Հովակիմյանն է իրենց գլխավոր խնդրողը, որ Գառնիկ Հովակիմյանի չլինելու դեպքում իրենք անպայման կհաղթեն։ Անշուշտ, տարբեր կերպ կարելի է մեկնաբանել այդ վիճակը։ Բայց առավել հավանական ենք համարում տարբերակը, որ Գառնիկ Հովակիմյանը ծանրակշիռ խաղաքող է լինելու առաջիկա մրցակցաբարում և օժտված է լինելու ուժերի հարաբերակցությունը փոխելու ներուժով։ Ոմանք, սակայն, այդ անձնավորության լուրջ գործոն լինելը պայմանավորում են Սաքսիմ Հակոբյան բարեկամով և համոզմունք հայտնում, որ Քաջարանի կոմբինատի տնօրենը չի պաշտպանի Գառնիկ Հովակիմյանի թեկնածությունը, եթե կուսակցությունը չառաջադրի իրեն։ Այդ հարցերի շուրջ ենթադրություններ անելը, իհարկե, դուրս է մեր խնդրից, սակայն չենք կարող համաձայնել մտքին, որ Գառնիկ Հովակիմյանի քաղաքական կենսունակությունը պայմանավորված է Սաքսիմ Հակոբյանով։ Ճիշտ է՝ ժամանակն ու դերերը փոխվել են, բայց նրա քաղաքական կենսունակությունը (գոնե Սիսիանում) չի թուլացել այնքան, որ հանդես գա Սաքսիմ Հակոբյանի պատրոնությամբ։

Սիսիանյան իրականության առանցքային դեմքերից է Աշոտ Սիմասյանը՝ Սյունիքի տարածաշրջանային մաքսատան պետը, ով չի թաքցնում իր մտադրությունը՝ ակտիվ մասնակցություն ունենալու քաղաքացիների առաջիկա ընտրությանը։ Բայց Աշոտ Սիմասյանի վարկանիշը լուրջ փորձության ենթարկվեց այն բանից հետո, երբ Սիսիանում ստանձնեց ՀՀԿ Եվրոպական շտաբի ղեկավարի դերն ու այնքան էլ հաջող արդյունքներ չարձանագրեց։ Նրան վերագրվեցին արտահայտություններ, նախընտրական հնարքներ, որոնք սիսիանցիներին մտածելու տեղիք տվեցին։ Այդ փորձությունը, կարծում ենք, այնքան էլ անսպասելի չպետք է լիներ Աշոտ Սիմասյանի համար։ 2012-ի որ հենց ինքն էր 2011թ. հունվարին մեր թերթում հայտարարել. «Սիսիանի կացությունն այնքան մեղմ է Աֆղանստանի դրությանը, բոլորը պայքարում են, և յուրաքանչյուր ոք ձգտում է ինքը լինել դրության տերը, բայց, ի վերջո, համայնքը մնում է անմեղք, հայրս ու ինքնատիպ»։ Այդպես էլ եղավ։ Սակայն Աշոտ Սիմասյանն իրեն չի տեսնում քաղաքացիներին համարում, հավանաբար կառավարի իր թիմակիցներից մեկին։ Չի բացառվում նաև, որ իր թեկնածուն (ինչպես ինքն է ակնարկել) կլինի մարզպետի ու ՀՀԿ-ի թեկնածուն։ Աշոտ Սիմասյանի ընդդիմախոսները կարծում են մինչդեռ, որ նա չի կարող ինքնուրույն խաղաղող լինել քաղաքացիների ընտրությունում, որ նա կհայտնվի այն թեկնածուի ծամբարում, ում կսատարի իշխող կուսակցությունը և, որպես հիմնավորում-արդարացում, կհայտարարի, որ ինքը պետության զինվորն է և կանգնած է պետության կողքին, թեև որեւէ կուսակցության (այդ թվում՝ ՀՀԿ-ի) թեկնածուն և մեր պետականությունը միմյանց հետ կապ ունեն այնքանով, որքանով...

Սիսիանում շատերն են ժխտում նախկին քաղաքացի Լավրենտ Սարգսյանի գործերը, ով այնքան էլ լավ հարաբերությունների մեջ չէր ու չէ ոչ իր նախորդի՝ Գառնիկ Հովակիմյանի, ոչ իր հաջորդի՝ Աղասի Հակոբջանյանի հետ։ Եթե նա սեփական թեկնածուով հան-

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՀԿ-ն պարտվեց Սիսիան քաղաքում. ինչո՞ւ

Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ամբողջ ընթացքը Սիսիանում ունեցավ առանձնահատուկ դրսեւորումներ եւ ոչ պակաս յուրահատուկ արդյունքներ: Ավելի կոնկրետ՝ իշխող քաղաքական ուժը՝ Հանրապետականը, Սիսիան քաղաքում պարտություն կրեց: Պարտվեց եւ մեծամասնականի, եւ համամասնականի արդյունքում: Մեծամասնական ընտրակարգով ՀՀԿ-ի առաջադրած պատգամավորության թեկնածուն հավաքեց 14.4%, նրա գլխավոր մրցակիցը՝ 81.8%: Համամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքում (եթե չենք հաշվում առնվազն 939 զինվորականի մասնակցությունը, ովքեր ՀՀԿ-ի պոտենցիալ ընտրազանգվածն են) ՀՀԿ-ն ստացավ 2490, իսկ ԲՀԿ-ն՝ 2635 ձայն:

Նման պարտություն իշխող կուսակցությունը կրեց հանրապետության հատուկ նշանակություն ունեցող մեկը Սիսիանում է: Եվ, բնականաբար, հարց է ծագում՝ ինչո՞ւ այդպես ստացվեց, մասնավոր՝ որ ՀՀԿ-ն նաեւ Սիսիանում ոչինչ չէր խնայել հարթամակի հասնելու համար:


Անշուշտ, որջամիտ չէ կոնկրետ մեղավորներ փնտրել: Դա շատ պարզունակ կլիներ: Խնդիրն ավելի խորն է՝ ինչո՞ւ սիսիանցիները վերապահ վերաբերմունք ունեն իրենց նշանավոր գավակ Աշոտ Նավասարդյանի հիմնադրած ՀՀԿ-ի հանդեպ: Դո չի՞ կարող մի ամբողջ քաղաք սխալ լինել ու բոլոր առիթներով մերժել այդ կուսակցությանը:

Հարցն ավելի հրատապ է դառնում, երբ հիշում ենք, որ ՀՀԿ-ն Սիսիան քաղաքում պարտություն է կրել նաեւ 2005, 2008 թվականներին՝ քաղաքապետի ընտրությունում: Հարցի պատասխանը փորձեցինք որոշ չափով տալ մեր թերթի նախորդ համարում («Սյունյաց երկիր», 15 մայիսի 2012թ.): Հատկապես քննարկեցինք Թաթուլ Հակոբյանի սիսիանյան հաջողությունների պատճառները: Հատկանշական է, որ բոլոր կուսակցությունների սիսիանյան կառույցները պաշտպանում էին նրան: Մայիսի 4-ին պարզ դարձավ, սակայն, որ ՀՀԿ-ի թեկնածուի հետ մրցակցող Թաթուլ Հակոբյանին սատարում են նույնիսկ որոշ ՀՀԿ-ականներ: Տարօրինակ այդ իրողության մասին հայտարարեց ինքը՝ պատգամավորության թեկնածուն՝ մայիսի 4-ի հանրահավաքում՝ ասելով, որ ՀՀԿ

Սիսիանի նախընտրական շտաբի բազմաթիվ ներկայացուցիչներ իրեն հեռախոսագրեր են ուղարկում առ այն, որ թեւեւ ՀՀԿ-ի շտաբում են, բայց աշխատում են ոչ այդ կուսակցության թեկնածուի համար:

Սիսիանում ՀՀԿ-ի դեմ մեծաքանակությամբ շտաբում փաստը, որքան էլ արտառոտ երեւոյթ է մեր օրերում, դեռ եւս քննարկման առարկա չի դարձել անգամ այդ կուսակցության տեղական կառույցում: Կուսակցության տեղական լիդերներից եւ ոչ մեկը դեռ եւս հրաժարական չի տվել արձանագրված ծախողման համար: Նախընտրական շտաբն էլ որեւէ բացատրություն չի տվել այդ կապակցությամբ:

ՀՀԿ-ի սիսիանյան պարտությունն այլ կերպ է մեկնաբանում կուսակցության շրջանային խորհրդի ղեկավար Սամվել Թանգյանը: Ընտրությունների արդյունքները (ա՛յ քեզ բան) նա պարտություն չի համարում՝ «ՀՀԿ-ն շրջանում ունի 970 անդամ, բայց հավաքեց մոտ 8.6 հազար ձայն: Զեմ ասում, որ հաղթեցինք, բայց եւ չեն ընդունում, որ պարտվել ենք: Իհարկե, մենք ավելին էինք սպասում, քանի որ մարզպետ Սուրեն Խաչատրյանը եւ ՀՀԿ-ի մարզային նախընտրական շտաբի պետը եղել են շրջանի բոլոր համայնքներում, բազմաթիվ հարցերի լուծում տվել, որոշ խնդիրների լուծման ուղիներ նախառեղ: Բայց ընտրություններ են...»: Ա. Թանգյանը նախընտրական սադրանք համարեց մայիսի 4-ին քաղաքի Սիսիան Նահապետի անվան հրապարակում ՀՀԿ-ի ձեռնարկած համերգի շուրջ բարձրացված աղմուկը՝ «Քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Վաչիկ Սիրաբեյանն անձուլկել էր ինձ ասել, որ հրապարակը զբաղեցնելու մասին հայտը կարող եք ներկայացնել մայիսի 2-ին. մեր խոսակցությունը եղել է ապրիլի 30-ին: Այնուհետեւ... Քաղաքապետի հետ խորհրդակցելուց հետո նույնիսկ պատասխան չեն ուղարկել մեզ»: ՀՀԿ շրջախորհրդի նախագահը ոչ պակաս սադրանք համարեց Վուրյա Ոսկանյանի հուշարձանի տեղադրման շուրջ բարձրացված աղմուկը: «Վուրյա արձանը չպետք է թաքնվի Սիսիանում, մենք այդպես անելու իրավունք չունենք, եւ դա պարտեցին Վուրյաի հետ կապ չունեցող մարդիկ»: Ա. Թանգյանը համաձայն չէ տարածված կարծիքին, որ զինվորականները միանշանակ քվեարկել են հօգուտ ՀՀԿ-ի: «Զինվորականները քվեարկել են խզճի մտքով, եւ ոչ ոք



ՀՀԿ հիմնադիր Աշոտ Նավասարդյանի հուշարձանը Սիսիանում:

չի կարող ասել, որ բոլորը ձայն են տվել ՀՀԿ-ին»: Ըստ նրա՝ Սիսիանում (մեծամասնական ընտրակարգում) իսկապես վճռորոշ դեր է խաղացել տեղայնական մտածելակերպը, որ դատապարտելի է: Ոչ պակաս դեր են խաղացել դիտավորյալ մարտածրամված գրպարտչական բնույթի խոսակցությունները, որոնց ամենացայտուն օրինակը, Ա. Թանգյանի կարծիքով, մարզպետին վերագրվող եւ իրականությամբ չհամապատասխանող ֆրազն է՝ «Սիսիանցիները քաղաքանշանից դուրս են եկել»: «Եւ միշտ ուղեկցել են մարզպետին, նման խոսք չի հնչել, ինքն էլ սիսիանցի են եւ կվիրավորվել, եթե նման խոսք լսելի», - ասաց Ա. Թանգյանը:

ՀՀԿ Սիսիանի նախընտրական շտաբի պետ Աշոտ Սիմոնյանը ընդունում է քաղաքում ՀՀԿ-ի կրած պարտությունը, բայց դրա մեղավորն իրեն չի համարում միայն: Ըստ Աշոտ Սիմոնյանի՝ Սիսիանի ՀՀԿ-ական

որոշ երեւելիներ ի սկզբանե համաձայն չեն եղել իրեն նախընտրական շտաբի պետ նշանակելուն եւ հեռավորինս ձգտել են չաջակցել ՀՀԿ-ին: Այդ մասին նա հիմնավոր փաստեր ունի, բայց առայժմ չի ուզում հրապարակել:

Եվ Սամվել Թանգյանը, եւ Աշոտ Սիմոնյանը հավաստում են, որ Սիսիանի քաղաքապետարանը՝ իր մարդկային ռեսուրսով եւ մյուս լծակներով, բացառապես աշխատել է ԲՀԿ-ի օգտին:

Սիսիանի քաղաքապետ Ադաի Հակոբյանյանը, ով Սիսիանում գլխավորում էր այդ կուսակցության նախընտրական շտաբը, ասում է, որ ՀՀԿ-ի նախընտրական շտաբը որեւէ «բարեգործական» կամ «ներդրումային» ծրագիր չիրականացրեց Սիսիանում, եւ դա այն դեպքում, որ մարզի բոլոր համայնքներում համամասն ծրագրեր իրականացվեցին: Ըստ Ա. Հակոբյանյանի՝ «Մրցակցու-

թյունն այնքան էլ կուսակցությունների ու նրանց ծրագրերի միջեւ չէր, մրցակցությունը, նախեւառաջ, տեղական լիդերների միջեւ էր: Ընտրողները գնում էին կոնկրետ մարդկանց հետեւից: Մեր քաղաքի դեպքում՝ ընտրողներն այնքան էլ ոգեւորված չէին ՀՀԿ-ի լիդերների հետեւից գնալու հարցում: Դա է իրականությունը»: Ա. Հակոբյանյանի հավաստմամբ ՀՀԿ-ի տեղական գործիչները որեւէ միջոցի առջեւ չկանգնեցին՝ իրենց անհրաժեշտ ձայներն ապահովելու համար: «Անգամ կրթօջախների դռները փակեցին մեր առաջ, թեւ այդ կրթօջախներում հաճույքով էին ընդունում ՀՀԿ քարոզիչներին»: ՀՀԿ-ի տեղական շտաբիստները, ըստ Ա. Հակոբյանյանի, անգամ դպրոցների դռներն էին փակել, որ ուսուցիչներն ու աշակերտները չմասնակցեին ԲՀԿ-ի հանրահավաքին: Ինչ վերաբերում է ՀՀԿ-ի նախընտրական վերջին հանրահավաքի համար թույլտվություն չտալուն, ապա քաղաքապետն ասաց. «ՀՀԿ նախընտրական շտաբը սահմանված ժամկետում հայտ չի ներկայացրել, ինչի համար եւ թույլտվություն չի ստացել»:

Որոշ սիսիանցիներ եւ անգամ որոշ ՀՀԿ-ականներ այլ կերպ են բացատրում ՀՀԿ-ի պարտությունը: Ըստ նրանց՝ ՀՀԿ-ի նախընտրական շտաբը Սիսիանում վատ է աշխատել, իսկ մարզային շտաբում այդպես էլ չեն հասկացել (չէին էլ կարող հասկանալ), որ Սիսիանում մոտ իրողություններն են, որ հին մեթոդներով ու հին դերակատարներով չի կարելի ընտրողների հետ աշխատել:

...Սեր գրուցակիցներից յուրաքանչյուրը, ինչպես երեւում է, յուրովի է պատասխանում հետաքրքրող հարցին՝ ինչո՞ւ ՀՀԿ-ն պարտվեց Սիսիան քաղաքում: Բայց բոլորի մեկնաբանություններում ակնհայտ ճշմարտություններ կան, իսկ այդ ճշմարտությունների հանրագումարում, կարծեք, ուրվագծվում է առաջադրված հարցի պատասխանը: ՀՀԿ-ի վիճակը Սիսիանում լավ չէ: Այդ կուսակցությունն այնտեղ հիմնամասն է ամրամասնատված այն պետրին, որին լեք է իմաստնությունը: Բայց նրա տեղը, որքան էլ ծնծղաներ հնչեցնեն քվեի ու իրադարձությունների մասին, չի գբաղեցրել եւ չի կարող գբաղեցնել ԲՀԿ-ն: Ավելին՝ ԲՀԿ-ն նաեւ Սիսիանում այլեւս մայիսի 6-ի ԲՀԿ-ն չէ ու չի լինի տեսանելի ապագայում. պատճառները բազում են:

ՍՄՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

դես չգա, ապա տեղ կգտնի ՀՀԿ-ի թեկնածուի ծանրաբարձ: 2008-ի ընտրության արդյունքում Լավրենտ Սարգսյանը զբաղեցրեց 3-րդ տեղը՝ հավաքելով 1574 ձայն: Բայց քվեարկության 2-րդ փուլում գնաց եւ քվեարկեց Ադաի Հակոբյանյանի օգտին, ում հետ տարիներ շարունակ հակամարտության մեջ էր: Դա տեղի էր ունեցել իշխանությունների ճնշմամբ, չէ՞ որ կարող էր քաղաքապետի աթոռը կորցնելուց գատ ուրիշ բան էլ կորցնել: Գիմա էլ կորցնելու բան ունի եւ չի կարող ինքնուրույն խաղացող լինել: Մնում է պարզապես վերահաստատել, որ ի ներառման գաղափար, թեկուզեւ ջլատված, կա: Իսկ վերահաստատման ամենալավ առիթը ընտրություններն են:

Բայց... Սիսիանում, դատելով 2008-ի ՏԻՄ ընտրությունների արդյունքից, կա մի ընտրազանգված (ընտրողների մի մեծ խումբ),

որ վերը նշված անձանց կամ ուժերի հետեւից չի գնում, իսկ ավելի ճիշտ՝ մերժում է նրանց: Դեռ այդ ընտրազանգվածն էր, որ այն ժամանակ իրեն առաջնորդ կարգեց Տիգրան Պողոսյանին, ով նոր մարդ էր Սիսիանի հասարակական-քաղաքական կյանքում, ով ջարդեց սիսիանյան ստատուս-քվոն, ով սիսիանցիներին կոչ արեց՝ «Տեր կանգնել Սիսիանի արժանապատվությանը եւ թույլ չտալ, որ երեւանում ու Կապանում ստատուսները որոշեն Սիսիանի քաղաքապետի ով լինելը»: Այդ թեկնածուն քվեարկության առաջին փուլում հավաքեց 1939 ձայն՝ 61-ով պակաս Ադաի Հակոբյանյանից (այդ փաստը նույնիսկ վիճարկվեց դատարանում): Քվեարկության երկրորդ փուլում, Գովիկ Աբրահամյանի եւ Գագիկ Ծառուկյանի կոչով, նրա դեմ խմբվեցին առաջին փուլին մասնակցող բոլոր թեկնածուները (բացի Ուազիկ Դանիելյանից): Նրա դեմ

դուրս եկավ պետական ամբողջ մեքենան: Այդուհանդերձ՝ նույեմբերի 2-ի նոր քվեարկության արդյունքում ստացավ 3319 ձայն՝ 632-ով պակաս կրալիցիայի թեկնածու Ադաի Հակոբյանյանից: Մենք տեղեկություններ չունենք Տիգրան Պողոսյանի ներկայիս մտադրությունների մասին, թեւ այս դեպքում կարելի է ձեռնարկել կառաջադրի՞ մոտից իր թեկնածությունը Տիգրան Պողոսյանը: Կարելի է այն էլ, որ Սիսիանի ընտրողների մոտ կեսը, ըստ էության, մոտ առաջնորդ է ուզում ունենալ համայնքում: Իսկ թե ում կկարգի իրեն առաջնորդ, թե ում հետեւից կգնա այդ ընտրազանգվածը, ժամանակը ցույց կտա: Ասենք միայն, որ հենց այդ հարցի մեջ է թաքնված սիսիանյան ընտրությունների գաղտնագիր-բանալին:

Անշուշտ, մենք այն կարծիքն ենք, որ նոր հավակնորդներ են նոր ուժեր ի հայտ չեն գա՝ Սի-

սիանի քաղաքապետի համար մեկնարկած մրցապայքարում: Բայց նրանք, եթե ի հայտ գան նույնիսկ, էական փոփոխություն չեն մտցնի խաղադաշտում: Իսկ եղած հավակնորդներն ու բեւեռներն էլ հերիք են արձանագրելու, որ Սիսիանին առաջիկա ամիսներին սպասվում է ուժերի նոր դասավորություն: Դա չի լինի, իհարկե, այն դասավորությունը, որ ունեցանք մայիսի 6-ին: Եվ չի լինի միանակամաց ընտրողների 80%-ը, ինչին ակամատես եղանք մայիսի 6-ին՝ մեծամասնական ընտրակարգում:

Մի հաճախական էս՝ եւ Աշոտ Սիմոնյանի ու Սամվել Թանգյանի, եւ Գառնիկ Գովակիյանի ու Ադաի Հակոբյանյանի, ինչպես եւ Նավրենտ Սարգսյանի համար նոր քաղաքական հավակնությունները լրջագույն ռիսկ են պարունակում իրենց մեջ: Եթե նրանք մրցապայքա-

րի դուրս գան ու պարտվեն (իսկ բոլորը, բնականաբար, հարթող լինել են կարող), ապա այլեւս չեն ունենա չկրակված փամփուշտ, եւ դա կլինի նրանցից յուրաքանչյուրի վերջին ճակատամարտը:

Վերջին նկատառումը խնդրո առարկայի վերաբերյալ: Սիսիանում, հաշվի առնելով համայնքի հասարակական-քաղաքական ուժերի բազմաբեւեռությունը, կարծում ենք՝ ճիշտ կլինի, որ Սյունիքի մարզպետը չունենար իր կոնկրետ թեկնածուն, որ Սյունիքի մարզպետի թեկնածուն լինեին բոլոր առաջադրվածները, որ ինքը լիներ Սիսիանի քաղաքապետի ազատ եւ արդար ընտրության երաշխավորը: Այդ դեպքում, հավաստեք, Սիսիանում կստեղծվեր բացառիկ առողջ մթնոլորտ, իսկ հարթողներ կլինեին ամբողջ համայնքը եւ, իհարկե, Սյունիքի մարզպետը:

ՍՄՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կապանի N1 մանկապարտեզը 40 տարեկան է

ՀՈՐԵԼՅԱՆ

Մայիսի 24-ին Կապանի N1 մանկապարտեզը նշեց իր հիմնադրման 40-ամյակը։ Միջոցառմանը ներկա էին քաղաքապետ Արտուր Աթաբեկյանը, ծնողներ, մանկապարտեզի բարեկամներ, աջակիցներ։ Երեխաների խոսքերով ասած՝ «պարտեզում» ջերմ ու տոնական մթնոլորտ էր տիրում, կարծես թե յուրաքանչյուր մանուկ իր հետ հարազատ օջախ էր բերել մի նոր գույն ու խառնել մանկապարտեզի ներկայակալին։ Ասել է թե՛ երեխաներին կրթելու առաջին օղակը մանկապարտեզն է, որտեղ էլ նրանք դաստիարակվում, կրթվում են։ Տարեդարձը շնորհավորելու էին եկել նախակրթարանի շրջանավարտ սաները, ովքեր ասումներեցին, երգեցին ու հաջողություն մաղթեցին հարազատ օջախին։ Մանկապարտեզը մեծ աջակցություն է ստանում նաեւ քաղաքապետ Արտուր Աթաբեկյանից։ «Այսօր այն օրն է, որ մենք պետք է հետ նայենք, շնորհավորենք այն մարդկանց, ովքեր մի փոքր առնչություն են ունեցել այս մանկապարտեզի հետ», – ասաց Ա. Աթաբեկյանը։ Քաղաքապետը շնորհավորանքի հետ մեկտեղ 40-ամյա գործունեության առթիվ որոշ աշխատողների դրամական պարգևներ հանձնեց։ Մանկապարտեզի բուժքույր Իվետա Խաչատրյանի խոսքը. «Գրեթե 40 տարի է՝ բուժքույր են աշխատում մանկապարտեզում, եւ առաջին դեպքն է, որ իմ աշխատանքը նույնպես զնահատվում է։ Անկեղծ ասած, սա ինձ համար անակնկալ էր»։



Մասնավորապես՝ 2-շաբաթվա մյուսի

Գործունեության չորս տասնամյակն ուսած մանկապարտեզն ունեցել է հարյուրավոր սաներ, որոնցից շատերն այսօր մեր հասարակության արժանավոր անդամներն են։ Տնօրեն Քրիստինե Սողոմոնյանը նախ շնորհավորեց իր աշխատակիցներին, սաներին, ծնողներին, այնուհետեւ համառոտ ներկայացրեց նախակրթարանի անցած ուղին։ Գործունեության մասին օրը քննարկեց շատերը։ Երեկոյան դեպքի վայրում էին նաեւ արտակարգ իրավիճակների Սյունիքի մարզային վարչության փրկարարները, կոմունալ ծառայության աշխատակիցները։ Կատարվող աշխատանքներին տեղում հետևելու էր Կապանի քաղաքապետ Արտուր Աթաբեկյանը։ Այդ օրը Վաչագան գետը պատուհաս էր դարձել բնակչության համար։ Գետի մեծակայքում բնակվողները նշում են, որ վերջին երկու տասնամյակի ընթացքում դեռ այսպիսի իրավիճակներ չէին հայտնվել, Վաչագան գետն այս քան «բարկացած» չէին տեսել։

Մարզում տեղացող հորդառատ անձրևների մատուցած անակնկալներն այսքանով չավարտվեցին։ Մայիսի 23-ին երեւան-Մեղրի ավտոմայրուղու 311-րդ կմ հատվածում՝ Զամկետավան գյուղի մերձակայքում, Ջրախորհիկ-ի դիմաց արհեստական ջրվեժ էր գոյացել։ Կատարի լեռնաշղթայից գահավիժող Չոջոն ջրվեժը, որն ամռան ամիսներին ցամաքում է, իսկ գարնանը ջրառատ է դառնում, շեղվել էր հունից՝ լցվել ավտոմայրուղին։ Ջրվեժից հոսող ջրերին էին միախառնվել նաեւ հորդառատ անձրևների ջրերը եւ ճեղքել մայրուղու անվտանգության պատնեշը։ Մոտավոր տվյալներով ջուրը հոսել է գրեթե մեկ օր, որի ընթացքում արտակարգ իրավիճակների Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի ջրմուղ-կոյուղու աշխատակիցները ջանք էին գործադրում, որ երթևեկությունը չխաթարվի։ Ջրի հոսքի հետ մեկտեղ ճանապարհի էին թափվել խոշոր քարեր, ավազ, ինչն արդեն օրվա երկրորդ կեսին մաքրել էին եւ ճանապարհը վերադարձրել նախկին տեսքին։

ՋԱՐԻՆ ԶԱՄԲԱՐՁՈՒՄՅԱԼ

Վաչագան գետը դուրս էր եկել հունից

ՏԱՐԵՐ

Պրոգնոզի վերջին օրերին հորդառատ անձրևը դարձել է մեր առօրյայի անպակաս մասը։ Մայիսի 22-ի առավոտից անդադար տեղացող անձրևներն ու կարկուտը հսկայական վնաս են պատճառել մարզի մի շարք գյուղերին։ Օրվա երկրորդ կեսին մի քանի ժամով դադարեց տեղացող անձրևը, բայց երեկոյան նորից ուժեղացավ։ Գետը արագորեն պատճառել Վաչագան քաղաքի Վաչագան գետը (նույն օրը) դուրս էր եկել ափերից եւ լցվել փողոցները՝ մասնավորապես Մելիք-Ստեփանյան փողոցը։ Փողոցով հոսող սելավաջրերը մեծ խցանումների պատճառ էին դարձել։ Կուտակված ջրերը խոչընդոտել էին մեքենաների երթևեկությունը, ճանապարհը լցրել

մեծ քանակությամբ աղբով, տիղմով, ավազով։ Մելիք-Ստեփանյան փողոցն այդ ժամերին ամրանալեցի էր դարձել, մարդիկ խուճապի էին մատնվել։ Ջուրը լցվել էր նույն փողոցի բնակելի շենքերի նկուղները, առետրի կրպակները՝ պատճառելով վնասներ։ Գետը նաեւ թշել, տարել էր անհատական տները փողոցին միացնող կամուրջները, այգիները, բերքատու ծառերը։ Երեկոյան դեպքի վայրում էին նաեւ արտակարգ իրավիճակների Սյունիքի մարզային վարչության փրկարարները, կոմունալ ծառայության աշխատակիցները։ Կատարվող աշխատանքներին տեղում հետևելու էր Կապանի քաղաքապետ Արտուր Աթաբեկյանը։ Այդ օրը Վաչագան գետը պատուհաս էր դարձել բնակչության համար։ Գետի մեծակայքում բնակվողները նշում են, որ վերջին երկու տասնամյակի ընթացքում դեռ այսպիսի իրավիճակներ չէին հայտնվել, Վաչագան գետն այսքան «բարկացած» չէին տեսել։

Մարզում տեղացող հորդառատ անձրևների մատուցած անակնկալներն այսքանով չավարտվեցին։ Մայիսի 23-ին երեւան-Մեղրի ավտոմայրուղու 311-րդ կմ հատվածում՝ Զամկետավան գյուղի մերձակայքում, Ջրախորհիկ-ի դիմաց արհեստական ջրվեժ էր գոյացել։ Կատարի լեռնաշղթայից գահավիժող Չոջոն ջրվեժը, որն ամռան ամիսներին ցամաքում է, իսկ գարնանը ջրառատ է դառնում, շեղվել էր հունից՝ լցվել ավտոմայրուղին։ Ջրվեժից հոսող ջրերին էին միախառնվել նաեւ հորդառատ անձրևների ջրերը եւ ճեղքել մայրուղու անվտանգության պատնեշը։ Մոտավոր տվյալներով ջուրը հոսել է գրեթե մեկ օր, որի ընթացքում արտակարգ իրավիճակների Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի ջրմուղ-կոյուղու աշխատակիցները ջանք էին գործադրում, որ երթևեկությունը չխաթարվի։ Ջրի հոսքի հետ մեկտեղ ճանապարհի էին թափվել խոշոր քարեր, ավազ, ինչն արդեն օրվա երկրորդ կեսին մաքրել էին եւ ճանապարհը վերադարձրել նախկին տեսքին։

ՋԱՐԻՆ ԶԱՄԲԱՐՁՈՒՄՅԱԼ

Անկալում ենք աջակցություն

ՆԱՍԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

2012թ. մայիսի 22-ի լույս 23-ի գիշերը հորդառատ պատուհասեց Կապան քաղաքին։ Կարկուտաբարության ու հորդառատ անձրևի հետևանքով արհավիրքը սպառնում էր Գ.Սեդեի փողոցի գետափնյա անհատական տների եւ Մելիք-Ստեփանյան փողոցի պետական շենքերի բնակիչներին։ Վաչագան գետը դուրս էր եկել ափերից, թշելով անհատական տների հողամասերի մի մասը, գետի վրա կարողացավ կանուղջները։ Աղետի վնասները կարող էին ավելի մեծ չափերի հասնել, եթե չլիներ Կապանի ղեկավարությունից և հունու ու ժամանակին գործողությունները։ Կեցիչներից սկսած դեպքի վայրում էին Կապանի քաղաքապետ Արտուր Աթաբեկյանը, քաղաքապետի տեղակալ Վարդան Գեւորգյանը, «Նորոզի» ՓԲ ընկերության տնօրեն Ռազմիկ Փարսյանը, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արշակ Ուստաբաշյանը, փրկարար ծառայության մարտիկները։ Զատկապես վերջիններինս հմուտ գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ խուսափել առավել մեծ ավերածու-

թյուններից։ Թաղամասի բնակչության անունից բոլորին հայտնում են երախտագիտություն։ Միաժամանակ ուզում են հայտնել, որ հատուցվել է գետի ծախս ափին հենապատ կառուցելու անհրաժեշտությունը, քանի որ չի բացառվում, որ գետի՝ ափերից դուրս գալու դեպքերը կրկնվեն։ Այս հիմնախնդրի լուծման գործում ակնկալում ենք N38 ընտրատարածքից պատգամավոր ընտրված Վահե Զակարյանին, ինչպես նաեւ համամասնական ընտրակարգով Աժ պատգամավոր դարձած Մերուժան Սիմոնյանի աջակցությունը։

ԼՈՒՍԻԿ ՎԵՋԻՅԱՆ Գ.ՆՐԵՆԻ փողոցի բնակչուհի

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը վշտացած է Տիգրան Զարուբյունյանի որբերգական մահվան առթիվ եւ ցավակցում է Սեյրան Քալասանյանին ու հանգուցյալի մյուս հարազատներին։

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Կապանի քաղաքապետարանի աշխատակազմը ցավակցում է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին՝ փրկելի մայրիկի՝ Դեգիլ Բաղդազյուլյանի մահվան առթիվ։

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցություն է հայտնում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին՝ նրա մոր՝ Դեգիլ Բաղդազյուլյանի մահվան կապակցությամբ։

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Գորիսի պետական քոլեջի դասախոսական եւ ուսանողական կոլեկտիվները տիկին Դեգիլ Բաղդազյուլյանի մահվան կապակցությամբ ցավակցում են Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ Խաչատրյանների ու Բաղդազյուլյանների ընտանիքներին։

ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒՆԵՁ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻ ԶԱՄԱՐ ԶԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2012-2013 ՈՒՍԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության հիմնի վրա /12-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար հիմունքով ուսուցման տեղերի համար՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», վճարովի հիմունքով՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» եւ «Բուժական կուսնետոլոգիա» մասնագիտությունների գծով։

11-ից մինչև օգոստոսի 21-ը, ամեն օր, բացի կիրակի օրերից, ժամը 9.00-16.00:

Դիմորդը քոլեջի ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացնում է՝

- 1) դիմում,
- 2) կրթության մասին փաստաթղթի բնագիրը,
- 3) 4 լուսանկար (3X4սմ չափսի),
- 4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժնիների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական),

5) կցագրման վկայական (գորակույթային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինաչափազանց փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չգորակույցվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետման ունեցողներից՝ Հանրապետական զորակույցային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում)։ Դիմորդն ընդունելության գործընթացի կազմակերպման եւ անցկացման համար քոլեջում նախապես վճարում է 1000 (հազար) ՀՀ դրամ։

Քոլեջում ընդունելության քննություններն անցկացվում են օգոստոսի 24-26-ը։

Անվճար եւ վճարովի տեղերում մրցույթն իրականացվում է 2012թ. օգոստոսի 26-27-ը։ Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից հետո։ Գիմնական ընդհանուր կրթության բազայի վրա ընդունվածները մեկ տարի կուսումնասիրեն հանրակրթական առարկաներ։ Ուսման վճարը ուսումնառության առաջին տարում կազմում է 120.000 հազար դրամ, իսկ հետագա տարիների վճարը՝ ինչպես միջնակարգ ընդհանուր կրթության վարձավճարի չափով։

- /0406/ - «Քույրական գործ»
.....
150.000 դրամ
 - /0402/ - «Մանկաբարձական գործ»
.....
150.000 դրամ
 - /0405/ - «Դեղագործություն»
.....
160.000 դրամ
 - /0416/ -
.....
200.000 դրամ
 - /0410/ - «Բուժական կուսնետոլոգիա»
.....
160.000 դրամ։
- Քոլեջ ընդունված դիմորդի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր։
- Քոլեջում ուսանողական նպաստ եւ պետական կրթաթղթակ տալու կարգը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 01.03.2007թ. թիվ 297 Ն որոշմամբ։
- Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողովին։ Հասցեն՝ ք. Կապան, Շահումյան 37ա։ Հեռախոսներ՝ 5-25-70, 091-43-42-05:

Յինական ընդհանուր կրթության հիմնի վրա /9-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար հիմունքով ուսուցման տեղերի համար՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ» եւ «Դեղագործություն», վճարովի հիմունքով՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» եւ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների գծով։

Յինական ընդհանուր կրթության հիմնի վրա /9-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար հիմունքով ուսուցման տեղերի համար՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ» եւ «Դեղագործություն», վճարովի հիմունքով՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» եւ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների գծով։

Յինական ընդհանուր կրթության հիմնի վրա /9-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար հիմունքով ուսուցման տեղերի համար՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ» եւ «Դեղագործություն», վճարովի հիմունքով՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» եւ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների գծով։

Յինական ընդհանուր կրթության հիմնի վրա /9-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար հիմունքով ուսուցման տեղերի համար՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ» եւ «Դեղագործություն», վճարովի հիմունքով՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» եւ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների գծով։

Յինական ընդհանուր կրթության հիմնի վրա /9-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար հիմունքով ուսուցման տեղերի համար՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ» եւ «Դեղագործություն», վճարովի հիմունքով՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» եւ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների գծով։

ԽԱՅՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԱՄԱՎՈՐԸ

«Փառքին հասնելու ճանապարհն իմ աշխատանքն է եղել»

**Վերջին հանդիպումը
լրագրողի հետ**

Երբ տարիներ առաջ այցելեցի նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Դեզիկ Բաղդազյուլյանին, հեռուստացույց էր դիտում. «Ժամանակ քիչ ունեն, բայց առանց լրատվական ծրագրերի հնարավոր չէ», – ասաց նա և զրույցի ամբողջ ընթացքում հաճախ էր հարցերու անպատասխան թողնում և ուշադրությունը սեռեռում հեռուստացույցի էկրանին: Այն ժամանակ, նրա պատմելով, ամենից շատ հետաքրքրում էր, թե ինչ են խոսում հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին: Նաև ռուսական հեռուստատեսության լուրերի ծրագիրն էր դիտում, որովհետև երբեմնի մայրաքաղաք Մոսկվայի հետ կապված լավագույն հիշողություններ ուներ: Երբ տարիներ առաջ ընտրվեց ԽՍՀՄ գերագույն խորհրդի պատգամավոր և պետք է Մոսկվա մեկնեի ու մասնակցեր հերթական նստաշրջանի աշխատանքներին, ոչ միայն պատասխանատվություն էր զգում, այլև ուրախություն. նաև չթաքցրեց, որ դա իր համար իսկական տոն էր, հանդիսություն: «Պատասխանատվությունն ու կարգապահությունն իմ մշտական ուղեկիցներն են մինչև հիմա: Քառասուն տարուց ավելի կթողրուհի եմ աշխատել Գորիսի՝ այն ժամանակ «Ավանգարդ» կոչվող տնտեսությունում, մինչև ֆերմա հասնելն ամեն օր 10-15 կիլոմետր ճանապարհ եմ կտրել, 30 կով կթել, նաև քաղաքային և շրջանային խորհուրդների պատգամավորի աշխատանք կատարել ու այս ամենի հետ իմ ընտանիքում ամեն ինչ հասցրել եմ, որևէ անգամ չեմ ուշացել», – պատմում էր տիկին Դեզիկը: Հունորով պատմեց նաև, որ մի անգամ քիչ էր մնացել ուշանա Մոսկվա՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստի մեկնելուց: Գորիսի օդակայանի այն ժամանակվա նորամշակ աշխատակիցը համառորեն չէր հավատում, որ ինքն անվճար տոմսի իրավունք ունի և պահանջում էր վճարել: Ինքն էլ կողի է ընկնում ու չի ուզում ոչ վճարել, ոչ էլ այդ մասին տեղեկացնել: Դեզիկը շրջվեց Գորիսի համոզելուց հետո հազիվ վերջին ուղերթով հասնում է Երևան: Ինչպես էր եղել, Կենտկոմում իմացել էին այդ մասին. «Վերադառնալուց հետո Գորիսի օդանավակայանում քիչ էր մնում անհատապես ինքնաթիռ առաջարկելին», – ծիծաղեց վաստակաշատ կինը:



Հարցին, թե դժվար էր կթողրուհի կնոջ համար ռուսերենով անցկացվող երկարաշունչ նիստերին նստել, Մոսկվայում շփվել մարդկանց հետ, տիկին Դեզիկը պատասխանեց. «Հավատա, չէինք հոգում, որովհետև այդ ամբողջ ընթացքում այնպիսի մեթոդներ հարուստություն էինք ապրում, անգամ՝ պարծենում, այնպես որ պատրաստ էինք մի քանի օր էլ ավելի վայելել այդ զգացողությունը: Իսկ շփվելու առիթներ քիչ էին լինում: Ամեն ինչ հաշվարկված էր: Անգամ խանութ գնալու անհրաժեշտություն չկար: Նստաշրջանի առաջին իսկ օրերից մեզ համար առանձին խանութ էր բացվում, որտեղ բարձրորակ ապրանքներ էին վաճառում: Նաև զգուշացնում էին, որ երկու-երեք կտորից ավելի չգնենք: Դե էմ ժամանակներում հարյուր աչք էր մեզ նայում, հարցը կարող էր մինչև ԿԳԲ հասնել: Չնայած աշխատանքը գնահատում էին, պարգևներ շնորհում, բայց նաև ուշադրության կենտրոնում էիր, որ հանկարծ սխալ քայլ չանես», – հիշում էր տիկին Դեզիկը: Նրա խոսքով՝ այն ժամանակ աշխատող մարդուն ավելի շատ էին գնահատում, իսկ երբ իմացավ, որ տարվա մեջ հոկտեմբերի 15-ը նշվում է որպես գյուղի կնոջ միջազգային օր, դժգոհեց, որ դա քիչ է, ըստ նրա՝ ամբողջ տարին հողի հետ աշխատող կինն առանձնահատուկ ուշադրության պիտի արժանանա: Հպարտությամբ էր նշում, որ ժամանակին իր ամուսնը միշտ տեղական և հանրապետական, միութենական թերթերի էջերում է եղել: Սի օր նաև հյուրընկալել է Բաքվի կուսակցական թերթերից մեկի խմբագիրն, որին ամենից շատ զարմացրել է, որ առավտից մինչև ուշ երեկ աշխատող կնոջ տանն ամեն ինչ

«տեղը-տեղին» է: «Նրանք մինչև ֆերմա էին հասել, հետո երեկոյան ինձ հետ տուն եկան: Երբ ընթրիքին ճաշ հյուրասիրեցի, զարմացան, քանի որ գիտեին, որ առավտույան ժամը 6-ին եմ աշխատանքի գնացել: Չէին հավատում, որ գիշերն եմ եփել», – հիշում էր նա: Վաստակաշատ կնոջ կարծիքով՝ ժամանակակից կանայք շատ մտախոգ են իրենց ընտանիքի, ամուսինների, երեխաների բարեկեցության համար: Դժգոհ էր, որ Երիտասարդ կանայք օրվա մեծ մասն անց են կացնում «փողոցի նստարանին նստած», սուրճի սկուտեղի շուրջ, ու նրանց պարապությունը լցնող միակ միջոցը մնում է բամբակաբույսը: Ասում էր, թե տեղյակ է, որ բավարար աշխատատեղեր չկան, բայց համոզված էր, որ կինը, եթե մտքին դնի, իր համար աշխատանք կգտնի: Չարմանում էր, որ տնամերձ հողամաս ունեն, բայց կանաչին չուկայից են գնում: Ինքն արդեն ութերորդ տասնամյակն էր ապրում, սակայն չէր կարող առանց աշխատանքի: «Թեպետ երեխաներս կարող են ինձ ապահովել, բայց չեմ հանդիմանում, որովհետև գիտեմ, որ ես պիտի իմ այգին մշակեմ: Մտքն օր զօր, դեռ կով էլ կպահեմ, բայց վախենում եմ չկարողանա՞մ կթել, 40 տարի կով եմ կթել, վախենում եմ թեևս դավաճանեմ», – ասում էր տիկին Դեզիկը: Հարցին, թե ինչ են տվել նրան ժամանակին ստացած կառավարական մեծ պարգևները, բազմավաստակ կինը միանգամից պատասխանում է. «Անում, ճանաչում: Կաթնամանսնապահական ֆերմայում աշխատելն այն ժամանակ արդեն իսկ վաստակի առումով բավարար էր, տարեկան մի քանի տասնյակ կիլոգրամ միայն բուրդ էին տալիս, բարձր աշխատավարձ, բայց անումն ուրիշ էր և այն պիտի պահպանեիր, փայտայեթի: Ճիշտ է՝ քո աշխատանքն էին գնահատում, բայց գնահատում էին, չէ՞: Եվ ես միշտ հավատարիմ եմ մնացել, որպեսզի հանկարծ չասես, թե պարզել ստացավ ու արդեն թերի է աշխատում»: Նրա կարծիքով մեր օրերում գյուղի կնոջն ինքնավստահությունը պակասում է ու դրանում, ըստ նրա, կարելի էր տեղ ունի, թե երկիրն ինչպես է խրախուսում կնոջ աշխատանքը, սակայն, նրա համոզմամբ, կինը պիտի ոչ միայն վաստակելու համար շատ աշխատի, այլև կարողանա բարձրացնել իր ինքնագնահատականն այնպես, որ իր հետ հաշվի նստեն ոչ միայն ընտանիքում: Եվ նախկին Գերագույն խորհրդի պատգամավորն ավստոսում էր, որ այս առումով ամենաշատ տուժում է գյուղի կինը: Ու գուցե այդ պատճառով էլ կանանց ձգտումը նոր հաջողությունների հասնելու համար մեծ չէ: Իսկ ինքն այն ժամանակ իր աշխատանքով մշտապես առավելագույնին էր ձգտում՝ «Փառքին հասնելու ճանապարհն իմ աշխատանքն է եղել»:

**Դեզիկ
Բաղդազյուլյան**

ԽՈՍԹ ԳԻՇԱՏԱԿԻ

2012թ. մայիսի 20-ին, կյանքի 82-րդ տարում, վախճանվեց անվանի գործընկերուհի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Դեզիկ Բաղդազյուլյանը, ում հուղարկավորությունը՝ կայացած մայիսի 22-ին, մասնակցեցին 33 նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի կառավարությունների անդամներ:

Դեզիկ Բաղդազյուլյանը ծնվել է 1930թ. Գորիս քաղաքում: Մանկությունն անցել է մեր ժողովրդի համար դժվարին ժամանակներում՝ պայմանավորված Հայրենական մեծ պատերազմով: Հայրը՝ Մետրոպ Բաղդազյուլյանը, Մեծ հայրենականի առաջին իսկ օրերից մեկնել է ճակատ: Գունարտակի հրամանատարի աստիճանի հասած էր ավագ լեյտենանտի կոչման արժանացած Մետրոպ Բաղդազյուլյանը զոհվեց 1943-ին՝ Հյուսիսային Կովկասի համար մղված կռիվներում. նրա զերեզմանը գտնվում է Պյատիգորսկ քաղաքում:

Վեց մանկահասակ երեխա ունեցող ընտանիքի հոգսը ծանրացել է մոր՝ Վարսենիկի ուներին: Ես ինքը՝ Դեզիկ Բաղդազյուլյանը, տեղի ութնամյակն ավարտելուց հետո իրենից ավագ երկու քրոջ հետ ստիպված աշխատանք է անցել շրջկենտրոնի «Ավանգարդ» տնտեսությունում և արել հնարավորը՝ որքանք ընտանիքի հոգսերը թեթևացնելու համար: Այդ տնտեսության հետ էլ կապված է նրա աշխատանքային ամբողջ կենսագրությունը՝ մինչև 1992 թվական: Աշխատել է տնտեսության տարբեր ոլորտներում՝ դաշտավարություն, այգեգործություն, ապա և անասնապահություն:

Դեզիկ Բաղդազյուլյանն աշխատանքում տարիներ ի վեր ունեցել է անուրանալի հաջողություններ և Գորիսում, ինչպես նաև շրջանի սահմաններից դուրս վաստակել հարգանք, հեղինակություն և ճանաչում: Քանիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի, Գորիսի կուսշրջկոմի անդամ, Գորիսի շրջանային ու քաղաքային խորհուրդների պատգամավոր: 1970-75թթ. եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Դեզիկ Բաղդազյուլյանի նվիրական աշխատանքը քանիցս գնահատվել է պետական ու գերատեսչական պարգևներով, իսկ 1973թ. արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

Լինելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ընդգրկված լինելով կոմկուսի հանրապետական և շրջանային ղեկավար մարմիններում՝ Դեզիկ Բաղդազյուլյանը երկար տարիներ Գորիսը ներկայացրել է հանրապետությունում, անձնական ներդրում ունեցել քաղաքի և շրջանի գյուղերի առջև ծառայած մի շարք խնդիրների լուծման գործում:

Դեզիկ Բաղդազյուլյանն ավանդապահ հայ կին էր, հոգատար մայր: 1950թ ամուսնացել է համաքաղաքացի Սերյոժա Սահակյանի հետ, ով նույնպես աշխատում էր «Ավանգարդ» տնտեսությունում և մինչև կյանքի վերջը՝ 2002 թվականը, ակտիվ մասնակցություն ունեցել այդ տնտեսության կյանքին: Դեզիկ Բաղդազյուլյանն ու Սերյոժա Սահակյանը ստեղծել են օրինակելի ընտանիք, ունեցել վեց զավակ, որոնցից երկուսը մահացել է վաղ տարիքում: Նրանք ծնողն են Սուրեն Սահակյանի, ով Արցախյան ազատամարտի ճանաչված հրամանատարներից է, իսկ 2004 թվականից՝ Սյունիքի մարզպետը:

Դեզիկ Բաղդազյուլյանը նաև կարեկից ու հոգատար բարեկամ էր, ընկեր է կարևան, Գորիսի առօրյայով մինչև կյանքի վերջն ապրող անձնավորություն:

Նրա ամուսնը մշտապես կապված կլինի Գորիսի խորհրդային շրջանի պատմության հետ և կմնա երախտալարտ գործընկերուհի իշխողության մեջ:

Տոհմական քի համար դարն ակնթարթ է

Սկզբը՝ էջ 4

հիմնադիրների բարելավմանը: Շրջանի տասնյակից ավելի գյուղերում կառուցվեցին կրթօջախներ, կենցաղային նշանակության եւ գյուղական խորհուրդների շենքեր, ընդլայնվեց հեռախոսային ցանցը: Ծավ, Շիշկերտ, Դավիթբեկ, Եղվարդ, Կաղնուտ, Եղեգ, Ամտառաշատ, Աղվանի գյուղերի բնակիչներն ավտոբուսային ամենօրյա երթևեկությանը կապվեցին շրջկենտրոնի հետ: Արխսու Սարգարյանի գերակա «թուլությունն» էր գյուղական դպրոցը՝ որպես ազգապահպանության կարենոր պայման. կառավարության առջև դնում էր Կապանի շրջանի գյուղերում, անկախ աշակերտների թվից, դպրոց ունենալու խնդիրը, ինչպես Ուժնիս գյուղում կառուցվեց դպրոց ընդամենը երեք աշակերտի համար: Իսկ Ազարակ գյուղի դպրոցի կառուցման ժամանակ եւ շինարար էր, եւ պատվիրատու, եւ ֆինանսավորող: Շենքի նախագծման հարցում կառավարությանը կառավարությունը հաստատել է շինարարությունը սկսելուց 7-8 ամիս հետո միայն: Քաղաքակիրթ գյուղի մեջ տիրոջը բնորոշ սրտացավությանը տեսնում էր երկրի ապագան: Ինչ մոտ տպավորված է, թե ինչպիսի պատասխանատվությամբ էր կատարում իր վրա դրված ամենափոքր համեմարարությունից մինչեւ ամենամեծը՝ լինի դա դպրոցի աշակերտին տրված խոստում, թե գործադիր կոմիտեի առջև ծառայած խնդիր լուծում: Ա.Սարգարյանը մարդկանց հմայում էր պետական մտածողությամբ, գործիմացությամբ ու նվիրումով, մարդուն հավատալու ու գնահատելու կարողությամբ: Թավ հոնքերի հերթը թաքնված արտաքին խստահայացության տակ բարի մարդ էր, ձեռնարկումներում՝ ուժեղ, ակունքներից անսահման նվիրված քաղաքացի ու գործիչ էր: Պատմում են՝ ֆեռնոնենալ հիշողություն ուներ Ա.Սարգարյանը, ոչինչ չէր վրիպում նրա ուշադրությունից: Ամտառաշատից եկած գյուղացիներից մեկը համագյուղացիների հորդորով մի խնդրով գալիս է գործկոմի նախագահի մոտ, հարցը քննարկում մանրամասնորեն, ապա գնում իրենց գյուղը: Գյուղացիներից մեկը հարցնում է. - Հը, ի՞նչ եղավ: - Աչքիս ոչ մի բան չէր կամ, պատմելիս ոչ մի նշում չարեց: Բայց խնդիրը լուծում գտավ: Ա.Սարգարյանը բոլորի՝ անգամ աննշան կարիքներին, հոգսերին հասնում էր, սոցիալական արդարությունը վերահսկում: Գործկոմի նախագահի ուսերին ծանրացավ Կապանի տարածքում 1968թ. տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքների վերացումը, սատար եղավ աղետյալ ազգաբնակչությանը՝ արագ վերագտնելու կյանքի բնականոն ընթացքը: Արխսու Սարգարյանն այնտեղ էր, որտեղ եռում էր բեղուն աշխատանքը. շինհրապարակում բանվորների հոգսերն էր կրում, հողի մշակների առաջնաերթը խնդիրները լուծում, իրագործում քննարկում շրջանի ազգաբնակչությանը

գյուղները բերով ապահովելու հարցը, բարելավում ուսուցչի եւ բժշկի սոցիալական կենսապայմանները... Բերեմ մի փաստ եւս : Ա.Սարգարյանի ղեկավարման տարիներին Կապան քաղաքի կոլտնտեսային շուկայում տեղադրված էին Գեղամուշի, Ազարակի, Ուժնիսի, Նորաշենի, Դավիթբեկի կոլտնտեսային խանութները, որոնք ազգաբնակչությանն ապահովում էին սեզոնային բնամթերքով: Այսօր այս փաստը սոսկ լավ հիշողություն է. որքան կշահեր նույն շուկայում տեղական բնամթերքով առետորի մանուրի-նակ կազմակերպումը, երբ Կապանի փակ շուկան եւ հարակից բացօթյա մի տարածքն այսօր որպես առետորի թեժ կետեր չեն ծառայում այլևս: Մերժում էր դարն ապրածը, հնացածը, քարացածը: Կարային խելամիտ քաղաքակառուցչական պաշտպան էր, իր արդյունավետ աշխատանքով վարակում էր բոլորին: 1963թ., խորհրդային շրջանում, տնտեսության տերիտորիալ կարգով կառավարման վերակազմակերպման հետեւանքով տեղական կառավարման խորհուրդներն ինքնաբերաբար հայտնվեցին գյուղատնտեսության բնագավառի ղեկավարման լծակներից դուրս, որը ստեղծում էր կոնֆլիկտային վիճակ եւ դժվարություններ: Իրավիճակից ելնելով՝ Ա.Սարգարյանը դիմել էր ԽՍՀՄ կառավարությանը՝ համոզիչ ցույց տալով անձնական նկատառումները գյուղատնտեսության ոլորտն այրօրինակ մոդելով ղեկավարելու աշխատանքի անարդյունավետությունը: Շատ չանցած՝ պատասխանեցին, որ այդ հարցապնդումն ընդունվել է, եւ մշակվում են նոր բարեփոխումները: Նման օրերում այդպիսի հարցարդումները կարող էին այլ կերպ ընկալվել եւ համարժեք պատասխան ստանալ: Աշխատանքում պահանջկոտ էր, թերությունների ու բացթողումների հանդեպ՝ անհանդուրժող, բարձր էր պահում մտավորականի կերպարի հարգը: Դարաշինման-Եղվարդ ոռոգման ջրատարի կառուցման անհրաժեշտ առաջարկությունն Ա.Սարգարյանն էր ներկայացրել, որով հնարավորություն կընձեռվեր Ազարակի, Եղվարդի, Ուժնիսի արգավանդ հողատարածքները ոռոգելի դարձնել եւ բնակչությանը թարմ բանջարեղենով ապահովել: Դժվարությամբ էր համոզում կառավարությանը, որ ինքը ստեղծում է գյուղատնտեսական արտադրանք նաեւ հանքի բանվորների եւ բոլոր քաղաքաբնակների համար: Ջուրը կարճ ժամանակով վերոհիշյալ գյուղերը հասավ, իսկապես գյուղատնտեսական բարգաւաճումն արձանագրվեց, բայց հետո այդ հարցը բարձրորդի մատնվեց, եւ ցայսօր էլ այդ եմբարշտանի անհրաժեշտ լուծում պահանջող էական խնդիրներից է, որը վճռորոշ է գյուղապահպանության համար: Իսկ Ներքին Հանդ, Շիշկերտ, Ծավ գյուղերի բնակիչները հողի մշակման դժվարություններ ունենալու պատճառով կանգնած էին ընդհուպ հայրենի հողը լքելու եւ Արարատյան դաշտի բարեբեր տա-



Լուսավորություն



1969թ., Արխսու Սարգարյանը հարազատների ու մերձավորների հետ:

րածքները տեղափոխվելու փաստի առջև: Ա.Սարգարյանի նախաձեռնությամբ նշված գյուղերի բնակիչներին տեղափոխումները կատարեցին իրենց սահմանների տարածքներում վերաբնակվելու համար: Նրանց սոցիալ-կենցաղային պայմաններն ապահովվեցին մեծ ջանքերի գնով, միայն թե չդատարկվեին կապանյան սահմանամերձ գյուղերը: Թեջադի հանքը փակվելուց հետո թափոնների վրա հնարավորություններ տրամադրեցին այգիներ ստեղծելու, բայց տարածայնություններ առաջացան տեղական իշխանությունների հետ: Նախաձեռնությունն իրականացվեց այսպես. չջանկապատեցին այգիները, մասնավոր սեփականություն չհամարեցին, հողի օգտագործման խնդիրները լուծվեցին հոգուս բնա-

պահպանության եւ գյուղաշխարհի մարդկանց օգտակարության: Ժամանակի ընթացքում նա ստացել է «Ջակոն Վարդանիշ» բնորոշումը՝ որպես օրինակականությանը հավատարիմ պահպան: Կապան աշխարհի պատմության մեջ կմնա որպես ուղի հարթող ղեկավար, նախագահ: Հանրապետական կարգի անհատական կենսաթոշակառու դառնալուց հետո էլ շարունակել է պետական եւ հասարակական արգասավոր գործունեությունը որպես Կապանի շրջապատ ընկերության նախագահ, իսկ 1975-1985թթ. Կապանի ինֆորմացիոն հաշվողական կայանի պետ էր: Վետերանների խորհրդի նախագահ Աշոտ Գովհաննիսյանը պնդում էր, որ Արխսու Սարգարյանը կա-



Կապանի Արամ Մանուկյան 1 շենքի ճակատին փակցված հուշատախտակը, որը վկայում է Ա.Սարգարյանի՝ այդ շենքում 1960-ից բնակվելու մասին:

Ազարակ գյուղի դպրոցը, որ 2002թվականից կրում է Արխսու Սարգարյանի անունը:

րող էր երեսնամյա՝ կառավարության աշխատակազմում, բարձր պաշտոններ զբաղեցնել, բայց նրան միշտ ձգում էին հայրենի Կապան աշխարհի հողը ու ջուրը, աշխատանքը, ազնիվ ու շիտակ կապանցիները: Իր գիտակցական կյանքում Ա.Սարգարյանը դրսևորել է կազմակերպչական արտակարգ ունակություններ, անսպառ եռանդ, պատասխանատվություն եւ նվիրվածություն ողջ հասարակության հանդեպ: Ուներ մարդկային, քաղաքացիական վեհ նկարագիր: Ժողովրդի հիշողության մեջ մնալը մեծ փառք է: Երջանիկ եւ այն գործիչները, ովքեր իրենց մարդագիտությամբ, մարդկայնությամբ, մարդասիրությամբ, արդարամտությամբ, անկաշառությամբ սիրված անուն են հասարակության բախտը, ճակատագիրը կոփելիս, մարդկանց գնահատելու առանձնահատուկ կարողությամբ են օժտված, ժողովրդի կամքի արտահայտիչն են եւ ժողովրդի լավագույն զավակներից են մնում հավետ: Երկու անգամ եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր՝ իր խորհրդարանական գործունեությունն ուղղելով ընտրողների պատվիրանների կատարմանը: Գերագույն խորհրդի ամբիոնն օգտագործում էր համազգային խնդիրներ արծարծելու համար: Արժանահավատ եւ միասնական պետության առաջընթացի ներկայի եւ ապագայի ջատագով էր: Արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի եւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության երկու պատվոգրի: Ա.Սարգարյանն ուներ մարդկային, քաղաքացիական վեհ նկարագիր: Պատմեն միայն բնութագրական մի դեպք: Նրա թամար հորաքույրը 15 տարեկանում ամուսնացել էր ապրում էր Սիջին Ասիայում, հարազատների ու բարեկամների հետ՝ ժամանակի հոլովույթում կապը խզվել էր: Լսել էր եղբոր տղայի՝ Արխսուի հռչակի մասին, եւ օրերից մի օր համոզվեց, որ մի անուշիկ տատիկ անակնկալ եկավ նրան տեսության: Հեռու-մոտիկ բոլոր բարեկամների համար ցնծություն էր հորաքույրը հայտնությունը, որի տեսակ-տեսակ արեւելյան անուշահամ ուտեստները՝ թխվածքները, ճաշերը, հետո պատրաստված սովորեցին տոհմի հմուտ տանիրուհիները: Պարզվեց, որ հորաքույրը զավակներ չէր ունեցել, պահել էր ամուսնու երեխաներին, մեծացրել, ամուսնացրել նրանց, իսկ ամուսնու մահից հետո արում էր միայնակ: Արխսու ամիսն արում էր նախապես այդպես էինք դիմում) համոզեց թամար հարաքույրին փոխադրվել Կապան, ապրել սիրելիներին միջավայրում: Հենց ինքն էլ կազմակերպեց բնակարանափոխությունը՝ տեղավորելով իր տան կից շենքում: Եվ ինչպես իր մորը կխնամեր օր

ԵՆՎԱՆԻ ԿԿՐԱՆՑԻՆԵՐ

Թերության, տասնամյակներ շարունակ այցելում էր նրան, հոգում բոլոր հոգսերը: Իսկ վերջում էլ փառք ու պատվով մայր հողին հանձնեց մորահոտ հորաքրոջ դին:

Ազարակի դպրոցի տնօրեն Ռուզաննա Ավանեսյանը ծագումով առաջաձորցի է, բայց այսօր էլ սիրով վերհիշում է, թե ինչպես էր Ա.Սարգսյանը հմուտ այգեգործի պես ջանասիրաբար ու խնամքով մշակում իր տնամերձ հողամասը: Ռ. Ավանեսյանն ապշում էր, թե մտավոր ահռելի էներգիայով այդ մարդը ֆիզիկական աշխատանք կատարելիս ինչպիսի գուրգուրանքով էր մտնում ամեն մի ծառի ու թփի:

Նրա կապը հայրենի հողի, ջրի հետ անբակտելի էր, միայն մահը կարող էր տարանջատել կյանքի ողնուծուծը կազմող այս ամենից:

1986թ. հունվարն էր, ճքճքան ցուրտ ձմեռ, Փեյա սարի սառցապատ բարձունքը՝ անանցանելի, ամերթաբեկելի: Իսկ Ա.Սարգսյանը տարել էր ուղեղի արյունազեղում, չէր խոսում, միայն հարազատներն էին կռահում նրա շարժումների իմաստը:

Այդ օրը դիմախաղով, հայացքով խնելու ցանկությունը հասկացրեց, բայց մերժեց մատուցված թեյը, հանքային ջուրը, սուրճը... Մնաց առաջարկել Ազարակի հայրենի պատեհական այգու՝ Կմբղոտի աղբյուրի սիրած անմահական ջրից, իսկույն հայացքով հավանություն արտահայտեց: Անմիջապես ուղևորվեցին դեպի Ազարակ, բայց թեթև մարդատար մեքենան չկարողացավ հարթահարել Փեյա սարի ոլորանի տեղապատույտը: Մի կերպ հետ-հետ զննարկում, ճանապարհի մոտակա աղբյուրի ջրից հասցրին հիվանդանոց: Հիվանդն առաջին իսկ կումից կրահեց խաբեությունը: Մտածեցին՝ վերջին կամք է, բարեկամներն իրարով անցան, դժվարությամբ ամենազնայն գտան, ծեղքեցին Ազարակ տանող ճանապարհի սառույցները և Կմբղոտի անարատ ջուրը շուտափույթ հասցրին նրան: Հիվանդը ջրի կախարդական գործոնով պայծառացավ, հանգստացավ: Իհարկե, ճիշտ փոխորդումը, արդիական լավագույն բուժօգնությունը՝ առաջնակարգ նշյուղարարույթի միջամտությունն իրենց էական գործն արեցին, բայց առաջնայինը հայրենի հողի եւ ջրի գորուբյունն էր:

Այդ օրից հետո Ա.Սարգսյանը մինչև կյանքի վերջը շարունակեց վայելել հրաշագործ աշխարհի հրապուրանքը:

Անկարելի է չառանձնացնել, որ Ա.Սարգսյանը նաեւ ընտանիքի լավ ամուսին ու հայր էր: Այստեղ, իհարկե, մեծ ներդրում ուներ նրա կողակիցը՝ տիկին Քնարիկը՝ բարեհամբույր, պատկառելի ու ազնվական մի կին, ով հավասարապես կիսում էր ամուսնու կյանքի դժվարությունները եւ իր խնամքի ու հեռատես խորհրդատվությամբ ընտանեկան օջախը լցնում սիրով ու հաստատուն բոցկտուններով, անձնական ու հասարակական կյանքի ծեղքերումների հենակետ դառնում տնեցիների ու տոհմակիցների համար: Մորս մահից հետո նա մայրական թանկագին պարտավորվածությամբ անպայմանորեն առավոտ շուտ առաջինն ինքն էր շնորհավորում ծննդյան օրը, սրտանց ուրախանում իմ հաջողություններով: Իմ հուշերում նա մնում է մեծ մոր լայնասիրտ ու խոհական կեցվածքով՝ միշտ արժանի երախտապարտության:

Ա.Սարգսյանը մահկանացուն կնքեց 1993թ. հունիսի 9-ին, բայց թողնեց անմահ հիշատակ: Կապանում՝ նրա ապրած տան պատին, անբաղված է հուշատախտակ: Ազարակ գյուղի դպրոցն անվանակոչված է նրա անունով: Արժանահիշատակ է

նաեւ երախտագետ, այսօր արդեն տոհմի առաջնորդությունը ստանձնած լավագույն որդու՝ Մարատ Սարգսյանի նախածնունդները: Ազարակի դպրոց ընդունվող առաջին դասարանցի համագյուղացուն դպրոցական պայուսակով եւ գրենական պիտույքներով շնորհավորում է գիտելիքի օրը՝ կրթության տաճարում առաջին քայլերն անելու համար եւ պատգամուն Ազարակի ծորերից ու կուսական անտառներից, հող ու ջրից սկսվող հայրենիքին նվիրվել ամենագործ, հավատարիմ լինել արմատներին ու մայրենի լեզվին:

Մանկավարժական, պետական եւ հասարակական գործունեության առումով Ա.Սարգսյանն իր տոհմում ունի արժանի հետետրոյցներ: Մանկավարժներ են եղել կինը՝ Քնարիկը, դուստրեր Ալվինան եւ Լյուդմիլան, որդին՝ Մարատը, Սյունիքի տարածաշրջանային՝ եվրոպական չափանիշներով որակյալ կրթություն իրականացնող պետական քոլեջի վաստակաշատ տնօրենն է: Թոռնուհի Գայանեն եւս մանկավարժական կրթություն ունի: Մարատի դուստր Քնարը դասախոսություններ է կարդում Լոնդոնում: Լյուդմիլայի դուստր Աննա առանձնահատուկ հպարտանում էր իր Աբիստոլ պապով, դեռ յոթերորդ դասարանում դասին իր պապին ներկայացրել է որպես անբասիր ու կատարյալ մարդ, Աննա այսօր առաջատար տնտեսագետ է: Արտաշ եղբոր դուստրը՝ Եմման, դասախոսում է ազրաբային պետական համալսարանում, դոցենտ է, նրա աղջիկներից Նաիրան ԱՄՆ-ում տեսական մեխանիկայի գծով պրոֆեսոր է, իսկ Աննան բժշկական գիտությունների դոկտոր է, մեր հանրապետության լավագույն ակնաբույժներից: Ավետլանա Թունանյանը եղել է Քաջարանի, ապա Կապանի շինարարական տեխնիկումների տնօրեն, շրջկոմի քարտուղար, Երեւան քաղաքի վերահսկողության կոմիտեի նախագահ, իսկ եղբայրը՝ Էդիկ Սարգսյանը, «Կապան» շրջանային թերթի երկարամյա բարձրակարգ խմբագիրն էր: Նրանց կրտսեր քույր Սիլվան եղել է անզերեցի դասախոս, իսկ դուստր Լիլին Չարավային Կարլինայի համալսարանի պրոֆեսոր է հոգեբանության գծով, որդի Արսենը տնտեսագիտության բեկնածուն է: Վահան հորեղբոր տղան՝ Թանգի Սարգսյանը, ՀԽՍՀ վաստակավոր մանկավարժ էր, N2 միջնակարգ դպրոցի անօրինակ տնօրենը, իսկ դուստրը՝ տողերիս հեղինակը, հոր մասնագիտության արժանավոր շարունակողն է: Օհան հորեղբոր թոռներից արժանահիշատակ է Ռոմիկ Սարգսյանը, ով աշխատանքային կենսագրությունը սկսել է Շիկահող գյուղի դպրոցում որպես մանկավարժ, իսկ այսօր հանրապետության հանրաճանաչ բանաստեղծներից է: Հիշենք նաեւ մեր տոհմից հռչակավոր ճարտարապետ Պատվական Սարգսյանին, ով Մոսկվա քաղաքում կառուցված մի շարք կանոնների նախագծերի հեղինակն էր: Սարգսյանները ճանաչված են նաեւ տնտեսագիտության, ճարտարագիտության, բժշկության եւ այլ ոլորտներում:

Աբիստոլ Սարգսյանը հարգատներին եւ բարեկամներին ուղղված բարյացակամության փոխորժավոր բարեխոսություններ ուներ, վստահություն ներշնչող պատեհական պատվիրաններ, բոլորի կենսակերպն օրինապատշաճ դարձնելու սկզբունքներ, կյանքի պատասխանատու պահերին կենցած ծառի ավանդապահականությանը նվիրված պատգամներ: Մենք՝ հարագատներս, քիչ հնարավորություններ ենք ունեցել վայելելու այդ բազմազգաղ մարդու մտերմությունը, բայց երբեք չենք տրոսնջացել, այլ միշտ հպարտացել ենք, որ նա



1970թ., ԳԿԿ Կապանի շրջկոմի 1-ին քարտուղար Ռաֆիկ Մինասյանը եւ շրջխորհրդի գործկոմի նախագահ Աբիստոլ Սարգսյանն ընդունում են Կապանի շրջանին հանձնվող փոխանցիկ դրոշմ:



1966թ., ԳԿԿ կենտրոնի 1-ին քարտուղար Աստու Քոչինյանի հերթական այցը Կապան, ուղեկցողների մեջ է Աբիստոլ Սարգսյանը:



Աբիստոլ Սարգսյանն ուղեկցում է ՀԽՍՀ Միխայրների խորհրդի նախագահ Բաղդ Մուրադյանին՝ Կապան կատարած այցելության ժամանակ:

առաջին հերթին գործի մարդ էր եւ իր ժողովրդին էր պատկանում: Երիտասարդներին մահապետի իրավունքով գրկի մեջ առնելու, գլուխը հարազատորեն ու գործկանքով շոյելու, մեքենա հպարտ, խրախուսող թիֆիացնելու եւ վստահորեն դեպի ինքնուրույն ու ինքնատիպ կյանք մղելու իմաստախոսությամբ ոգեւորիչ, քաղցրաշունչ ու հեղինակավոր ներբող էր շշմում: Քանի՜ անգամ եմ մտնում պահերի մտքումս շշմացել. «Կանգ առ, ակնթարթ, որքան չքնաղ ես...»: Այդ պահերն իմ կյանքում Աստուն մերձեցաւ, ծուլվելու, աստվածամալու պահեր են: Ջահելներիս համար հուշերի գիրք էր եւ կենդանի հուշարձան, կյանքի դպրոցի դասերն ուսուցանող, ապրող հանրագիտարան:

Մարդը պատիվ է բերում իր ծննդավայրին՝ միշտ կրելով ճշմարտության ջախը, որը հաճախ այրում էր հենց իր ձեռքը: Ա.Սարգսյանի մտնում անհատները չեն կարող գերե մնալ դրանից եւ միշտ իրենք են կրում իրենց խաչը, մնացյալը թողնենք Աստունն եւ ապագայի գնահատությունը:

Սարգսյանների գերեզմաններից միշտ վերջինը թանկագին, անզուգական մարդու գերեզմանն էր: Այդ պահերն իմ կյանքում Աստուն մերձեցաւ, ծուլվելու, աստվածամալու պահեր են: Ջահելներիս համար հուշերի գիրք էր եւ կենդանի հուշարձան, կյանքի դպրոցի դասերն ուսուցանող, ապրող հանրագիտարան:

Եւ կանանուն են Սարգսյանների-Թունանյանների տոհմածառի կենցաղ կտավին լուսե անրջանքների աղավնիներ, հաց ու գինի, իմաստության եւ հավերժության գանգեր, իրենց արածից ու արարածից գոհ, հարգարժան, երջանիկ դեմքեր վրձնել այսօր եւ ընդմիշտ:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ



28.05.2012թ., Արցախյան պատերազմում զոհված սիսիանցիների պանթեոնում:

Ազգաբնակչության պարտեզներ կայանալու են

Սկզբը՝ էջ 1, 2

Մայիսի 28-ին կեսօրից հետո Սիսիանում բոլոր ճանապարհները Ազատամարտի հրապարակ էին տանում, իսկ մինչ այդ հանդիսության մասնակիցները եղան մերօրյա ազատամարտում ընկածների պանթեոնում, հարգանքի տուրք մատուցեցին հավերժի ճանփորդ դարձած տղաների հիշատակին: Սիսիանի Ազատամարտի հրապարակում հուշակոթողի բացման արարողությանը մասնակցում էին մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները, մայրաքաղաքից ժամանած անվանի սիսիանցիներ,

զինվորականներ, Վուրգ Ոսկանյանի մերձավորներն ու հարազատները, մարտական ընկերներ, հուշակոթողի քանդակագործ, պրոֆեսոր Գեոտիկ Բաղդասարյանը: Փողային նվազախումբը հնչեցնում էր տոնական նեղեղներ: Մինչ հանդիսությունը սկսվելը զրուցեցին հուշակոթողի կառուցման նախաձեռնողներին Գեոտիկ Գազիկ Ոսկանյանի հետ: «Սիսիանում կամավորական ջոկատները Վուրգի կողմից են կազմակերպվել, բնականաբար, բոլորը ցանկանում էին հուշակոթողի միջոցով հավերժացնել նրա հիշատակը: Երբ քաղաքապետարանը մասնաճիւղում կայացրեց, մենք՝ սիսիանցիներով երեսնում նախաձեռնող խումբ կազմակերպեցինք, որի մեջ մտնում էին ակադեմիկոս Գրիշա Դարիբյանը, ճարտարապետ, ակադեմիկոս Մուրադ Մուրադյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ծգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտոր Համլետ Մաթեոսյանը, բանաստեղծ Հովիկ Հովսեփյանը, պատմաբան, պրոֆեսոր Հակոբ Սիմոնյանը: Այս վերջին երկուսը սիսիանցի չէին, բայց Վուրգին լավ ճանաչում էին: Սենը

չուն կայացրեց, մենք՝ սիսիանցիներով երեսնում նախաձեռնող խումբ կազմակերպեցինք, որի մեջ մտնում էին ակադեմիկոս Գրիշա Դարիբյանը, ճարտարապետ, ակադեմիկոս Մուրադ Մուրադյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ծգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտոր Համլետ Մաթեոսյանը, բանաստեղծ Հովիկ Հովսեփյանը, պատմաբան, պրոֆեսոր Հակոբ Սիմոնյանը: Այս վերջին երկուսը սիսիանցի չէին, բայց Վուրգին լավ ճանաչում էին: Սենը



ԳԱՎԻԿ ՈՍՎԻԵՅԱՆ



ԱՂԱՍԻ ԳԱՎԻԿՅԱՆ



ԳԵՏԻԿ ԲՎՂԱՍՎԱՐՅԱՆ



ՄՈՒՐԵՆ ՈՍՎԻԵՅԱՆ



ԱՂԱՅԻՏ ՈՍՎԻԵՅԱՆ



ԱՐԱՅԻԿ ՎԱՐՈՒՅԱՆ

կանը չի ստանում: Որպես օրինաչափություն այդ գնահատումը գալիս է հետո, հետմահու: Այսօր մենք ակամատեսն ենք ասվածի: Այսօր մեր բուրբ աչքի առջև կանգնած է Վուրգ Ոսկանյանի հուշարձանը: Այս հուշարձանի պատվանդանին կարող ենք գրել մեր բուրբ զոհված ընկերների անունները, քանի որ յուրաքանչյուրն արժանի է մասնապատկի: Վուրգ Ոսկանյանի արձանը մարմնավորում է սիսիանցու հայրենասիրությունը, քաջությունը, հպարտությունը, համախմբվածությունը ու ազատատենչ ոգին, — ընդգծեց Արայիկ Վարդանյանը: Նա արժանին մատուցեց բոլոր նրանց, ովքեր աջակցություն են դրսեւորել հուշակոթող կանգնեցնելու գործում, նաեւ հայտնեց, որ իր մարտական ընկերներից ոմանք ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանի կողմից արժանացել են հուշանշանի եւ եռանդի կապակցությամբ՝ շնորհավորագրերի, որոնք հանձնվեցին տեղում: «Ուզում եմ ինձ երախտիքի խոսքը ուղղել բոլոր այլունքներին, Սյունիքի մարզապետին, Սիսիանի քաղաքապետին, երկրապահի տղաներին, Աշոտ Միսայանին, մյուսներին, — ներկաներին դիմեց Անահիտ Ոսկանյանը, — ուրախ եմ, որ բոլորի համատեղ ուժերով, ամեն մեկի ցանկությամբ ու եռանդով կարողացանք ունենալ ինձ հայրիկի քարե հուշը, քարե հավերժացած ներկայությունը: Պատկերացրե՛ք, 19 տարի շարունակ հայրիկին կարիքը շատ էի զգում, այսօր այն զգացողությունն ունեմ, որ նա մեզ հետ է, ինձ կողքին եւ անընդհատ իր խոսքերն են հիշում» պինդ կացրե: Ինքն ատում էր, որ այլունքին կրտսերը իրավունք չունի, այլունքին միշտ պիտի հպարտ լինի եւ պիտի պաշարի իր անկախության, հպարտության եւ արժանապատիվ կյանքի համար: Հայրիկին պատգամն էր հպարտ ապրել, կյանքի ոչ մի ղեկավարության առջև չխոստովել, նա հուշում էր, որ ղեկավարությունն անցողիկ է, որ մարդ իր անցելիք ճամփան պիտի այնպես հարթահարի, որ դիմացինի աչքերին չնայելու ուժ ունենա: Ես կարողացել եմ հորս պատգամներով մեծանալ, ինչի համար երախտապարտ եմ նրան, քանզի նրանից ժառանգել եմ շատ կարեւոր արժեքներ: — Շատ կարեւոր էր ինձ մտադրանքում իրականացնել, որ Վուրգին համապատասխան լինեք. պայքարող, ուժեղ, անձնագրի անհատ, ժայռի պես հզոր անձնավորություն, որ պետք է պարողների եւ մյուսների համար օրինակ ծառայի, քանզի մեր երկիրը պաշտպանված պիտի լինի Վուրգի մասն տղաների շնորհիվ, — ելույթի խոսքում ասաց հուշարձանի հեղինակ, քանդակագործ Գեոտիկ Բաղդասարյանը, — քանակազոր կերտելիս ինձ օգնել են ինձ գործընկերները՝ Հարությունը եւ Սելիքը՝ ինձ նախկին ուսանողները: Նրանց եւս ինձ երախտագիտությունը: Հուշարձանը օծեց եւ օրինանքի խոսք ասաց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Հայր Մակար վարդապետ Հակոբյանը: Հանդիսությանը տոնական երանգներ հաղորդեցին Սիսիանի ինքնագործունեության խմբերի եւ անհատ կատարողների ելույթները: **ՎԱՐՈՒՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

Այունյաց երկիր
 Տ Ա Մ Ն Օ Ր Յ Ա Թ Ե Ր Թ
 Գլխավոր խմբագիր՝
 ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
 Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒԹՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիրին» պարտադիր է: **Ք** նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
 Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ատորագրված է տպագրության 31.05.2012թ.: